

ՄԱՍՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

39Դ. ՏԱՐԻ ԹԻ 07 (1907) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԲ 23, 2019
VOLUME 39, NO. 07 (1907) SATURDAY FEBRUARY 23, 2019



Պաշտօնաթերթ
Մ. Դ. Հնչակեան Կուսակցության
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Դեմոկրատներու խճողուած Նախընտրական Դաշտը

2020 Նոյեմբերին կայանալիք Ամերիկայի նախագահական ընտրարշաւը արդէն իսկ մեկնարկած է: Գիշո տարի մը ետք տեղի պիտի ունենան առաջին միջկուսակցական ընտրութիւնները: Բաւական մեծ թիւ կը կազմեն Դեմոկրատ կուսակցութեան ջահակիրը դառնալու ձգտող թեկնածուները: Յարդ 12 յայտնի քաղաքական դէմքեր, որոնց մէջ հինգ ծերակուտական կանայք՝ Քամալա Յարրիս, Էլիզապէթ Ուորըն, Քրիսթին Գիլիպրէնտ եւ Էյմի Բլոպաչար յայտարարած են ընտրութիւններուն մասնակցելու իրենց մտադրութեան մասին: Կը սպասուի որ այս թիւը բարձրանայ յառաջիկային: Վերջին օրերուն իր թեկնածութեան մասին յայտարարեց ծերակուտական Պըրնի Սէնտըրզ, որ նախորդ ընտրութիւններուն Դիլըրի Քլինթոնի հիմնական մրցակիցն էր եւ իր յառաջիմական գաղափարներով կարողացած էր համակիրներու մեծ բանակ ստեղծել իր շուրջ:

Այս անգամ սակայն, Սէնտըրզ որպէս մրցակից պիտի ունենայ բազմաթիւ այլ թեկնածուներ, որոնք որդեգրած են իր յառաջ մղած՝ ընկերային արդարութեան ձգտող ծրագիրները: Դեմոկրատ հարցականի տակ է, եթէ ան պիտի կարողանայ նոյն յաջողութիւնները արձանագրել, եւ կամ, իր կողմնակիցներէն շատեր պիտի նախընտրեն իրենց գրաւը դնել աւելի երիտասարդ թեկնածուներու վրայ, նկատի ունենալով, որ Սէնտըրզ ընտրութիւններու օրը պիտի դառնայ 79 տարեկան:

Առաջատար թեկնածուներու շարքին կը դասուի նաեւ նախկին փոխ-նախագահ Ծօ Պայտըն, որ պաշտօնապէս չէ յայտարարած իր մասնակցութեան մասին: Պայտըն կը պատկանի չափաւորականներու խումբին եւ կը նկատուի ամենէն մեծ հաւանականութիւն ունեցող թեկնածուն: Սակայն, Պայտըն եւս տարիքային հարցը ունի եւ 2020-ին պիտի դառնայ 78 տարեկան:

Մեծ հետաքրքրութիւն կայ նաեւ երիտասարդ նախկին գոնկրէսական Պէթօ Օրուրթի անուան շուրջ: Ան անցնող Մայիսին շատ մօտ էր պարտութեան մատնելու Թետ Քրուզը՝ Թեքսասի ծերակոյտի աթոռին համար մղուող պայքարի ընթացքին, նահանգի մը մէջ, որ կը նկատուի հանրապետականներու ամրոցը:

Ով որ ալ յաղթական դուրս գայ Դեմոկրատներու խճողուած նախընտրական դաշտէն, մեծ հաւանականութիւն պիտի ունենայ պարտութեան մատնելու Տանուլտ Թրամփը, որուն ժողովրդակամութիւնը կը տատանուի 40 տոկոսի շուրջ, ինչ որ պատմականօրէն խիստ անբաւարար է նախագահ վերընտրուելու համար:

«ՄԱՍԻՍ»

Փաշինեանի Կառավարութիւնը Ստացաւ Խորհրդարանի Վստահութեան Քուէն

Հայաստանի Ազգային ժողովը 88 կողմ, 40 դէմ ձայներով հաւանութեան արժանացուց Նիկոլ Փաշինեանի կառավարութեան ծրագիրը:

Միաձայն կողմ քուէարկեցին «Իմ Քայլը» դաշինքի բոլոր 88 պատգամաւորները: Միաձայն դէմ քուէարկեցին ընդդիմադիրները՝ «Լուսաւոր Հայաստանի» ու «Բարգաւաճի» պատգամաւորները:

Մինչեւ քուէարկութիւնը Նիկոլ Փաշինեան իր եզրափակիչ ելոյթին մէջ յայտարարեց, որ կը սկսի իր երկրորդ քաջարշաւը՝ դէպի տնտեսական յեղափոխութիւն: Ով քայլ ունի ընելու, ինչպէս թաւաշէյ յեղափոխութեան օրերուն, այսօր ալ կոչ ըրաւ, թող քայլ իր հետ: Այդ ճանապարհին, ըսաւ, գլխուն վրայ պիտի ըլլայ միայն ու միայն ՀՀ դրօշը. - «Տնտեսական յեղափոխութիւնն էլ պէտք է յաղթի եւ յաղթելու ա: Յոռետեսա-

կան բոլոր կանխատեսումները պահէք ձեզ: Էդ որ ասում էք՝ յաղթանակը բազում տէրեր ունի, իսկ պարտութիւնը որբ է, եթէ նոյնիսկ մտածում էք պարտութեան մասին, էդ պարտութիւնը որբ էի, ե՛ս եմ էդ պարտութեան տէրը: Յաղթանակը ձերն է, բոլորինն ա եւ Հայաստանի Հանրապետութեան իւրաքանչիւր քաղաքացունն ա»:

«Լուսաւոր Հայաստանի» դեկավար էստոն Մարուքեան յայտնեց թէ իրենք դէմ են՝ Սերժ Սարգսեանի ժամանակէն մնացած քաղաքացիներու, նաեւ կառավարութեան կառուցուածքի պատճառով, ուր Ռստիկանութիւնն ու ԱԱԾ-ն նախարարութիւններ չեն դառնար, այլ կը մնան վարչապետին ենթակայ մարմիններ:

«Բարգաւաճ Հայաստանը» իր քուէարկութիւնը պայմանաւորած

Շար.ը էջ 5

Բացառիկ Յաջողութեամբ Պսակուեցաւ Հայ-Ամերիկեան Թանգարանի Թելեթոնը 8,138.986 Գոյացաւ Նուիրահաւաքէն



Թելեթոնի աւարտին՝ կազմակերպիչները ընդհանուր գումարի ցուցատխտակին առջեւ

Իր տեսակին մէջ անդրանիկ միջոցառում մըն էր, որ տեղի ունեցաւ անցեալ կիրակի, Փետրուարի 17ին: Արդարեւ Հայ-Ամերիկեան թանգարանի խնամակալ Մարմինը գեղեցիկ գաղափար մը յղացած էր կազմակերպելով հեռուստա-մարաթոն-թելեթոն մը, ի նպաստ կլենտէյլի մէջ կառուցուելիք պատմական եւ մեծարժէք ծրագրին:

Գաղութիա հայկական տասը գլխաւոր կազմակերպութիւններու կողմէ, հինգ տարիներ առաջ, նախաձեռնուած այս ծրագիրը կը նպատակադրէ նպաստել Հայաստանի եւ հայութեան քարոզչութեան ու հայապահպանման վսեմ գործին: Ինչպէս նաեւ մեր աւելի քան երեք հազար տարուան մշակոյթն ու համաշխարհային հարուստ քաղաքակրթութիւնը ծանօ-

թացնել այս երկրի ստուարաթիւ ու բազմազգի հասարակութեան:

Տեղույս հայկական գոյգ հեռուստակայաններէն վեց ժամ տեւող սոյն թելեթոնը, իր բարձրորակ եւ արհեստավարժ յայտագրով, լայն ընդունելութիւն գտաւ գաղութի տարբեր խաւերու հայ հասարակութեան կողմէ: Ողջոյնի խօսքերով եւ սրտաբուխ նուիրատուութիւններով հանդէս եկան ծանօթ անձնաւորութիւններ, բարերարներ, մտաւորականներ, դպրոցական վերին կարգերու հայ աշակերտներ, իրենց դրական գորակցութիւնը յայտնելով սոյն պատմամշակութային մեծ ծրագրի իրագործումին համար:

Խանդավառ ելոյթով հանդէս

Շար.ը էջ 5

Մահացած է Լուիզ Մանուկեան-Սիմոնը



Բարերար՝
Լուիզ Մանուկեան-Սիմոն

85 տարեկանին, Միացեալ Նահանգներու մէջ իր մահկանացուն կնքած է մեծանուն բարերար Ալեք Մանուկեանի դուստր՝ Լուիզ Մանուկեան-Սիմոնը:

Այս մասին լուրը տարածած է Մանուկեան-Սիմոն հիմնադրամը:

«Մեծ մարդասէր, ստեղծագործ մտքի տէր, իր ժողովրդի նուիրեալ գործիչ եւ խիստ բնաւորութեան մէջ ազնուագոյն եւ գերզգայուն սրտի տէր անձնաւորութիւն մը, որ մեր ժողովրդի մէկ որոշ ժամանակը շնորհիւ ամենայայտնի նուիրեալներէն եղած է: Ան եղաւ նաեւ Հայոց հայրենիքի աղետալի երկրաշարժէն տուժածներուն համահայկական օգնութեան գործի գլխաւոր նախաձեռնողներէն ու կազմակերպիչներէն, աւելին՝ խորհրդանիշներէն մէկը: Թիւրք կանգնեցաւ նորանկախ Հայաստանի կայացման, Մայր աթոռ Սբ. Էջմիածնի հզօրացման, Հայաստանի մէջ կրթութեան գործին՝ առաջին հերթին Երեւանի Ամերիկեան համալսարանի հիմնադրման գործին, - ըսուած է Հիմնադրամի հաղորդագրութեան մէջ:

Լուիզ Մանուկեան-Սիմոն յատկապէս իր հօր՝ Ալեք Մանուկեանի մահուրէն ետք որոշ ժամանակ մը վարած էր Նուիրահաւաք Բարեգործական Ընդհանուր Միութեան նախագահի պաշտօնը:

«Հայերը Մեր Երկրին Մէջ Երբեք Ցեղասպանութեան Չեն Ենթարկուած». Էրտողանը՝ Մաքրոնին

Թուրքիոյ նախագահ Ռեճէպ Թայյիփ Էրտողան արձագանգած է Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի՝ Ապրիլ 24-ը Ֆրանսայի մէջ Հայոց Ցեղասպանութեան յիշատակի օր հռչակելու մասին յայտարարութեան: Ըստ Armeniaber.am-ի՝ Էրտողանը Մաքրոնի յայտարարութեան գնահատական

Շար.ը էջ 5

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Արցախի Կարգավիճակը Լիսաբոնից՝ Մադրիդ

ԹԱԹՈՒԼ ՅԱԿՈԲԵԱՆ

Սուրճի շուրջ գրոց ունեցալ ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆինն նախկին համանախագահ Հէյկի Թալիթի հետ: Նրան ճանաչում եմ գրեթէ 25 տարի՝ այն օրերից, երբ դարաբաղեան կարգաւորման գործընթացը դեկավարում էին Իտալիան, Շուեդիան, Ֆինլանտիան:

Այսօր շատերն են մոռացել կամ չգիտեն, որ նախքան ԵԱՀԿ եռանախագահութեան հաստատումը՝ Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսա, որը տեղի ունեցաւ 1997-ին, կարգաւորման գործընթացը դեկավարում էին աւելի չէզոք համարում եւ ընկալում ունեցող շուեդներն ու ֆինները:

Ընդհանրապէս, շատ բան է փոխուել դարաբաղեան կարգաւորման գործընթացում: Թալիթի հետ գրոցում այս մասին եւս չի շեցնիք:

Այս գրութեամբ ուզում եմ չի շեցնել, թէ ինչպէս Արցախի կարգավիճակի հարցը մտաւ բանակցային գործընթաց եւ ինչպէս դարձաւ կարգաւորման միւս առանցքային եւ ամենավիճելի թեմաներից՝ կարգավիճակ, տարածքներ, անվտանգութիւն, փախստականներ եւ տեղահանուածներ, կոմունիկացիաներ:

Անշուշտ, հայկական կողմի համար Արցախի կարգավիճակը միշտ էլ եղել է առանցքային, սակայն, միւս կողմից, 1990-ականների կէսերին եռակողմ՝ Հայաստան, Արցախ, Ատրպէյճան ձեւա-

չափով ընթացող բանակցութիւններում այն չի եղել վէճի հիմնական առարկան: Կողմերը լռելեայն հասկանում էին, որ դրա քննարկումը տանելու է փակուղի, քանի որ հայկական կողմը չի համաձայնելու որեւէ կարգավիճակի, ըստ որի Արցախը որեւէ կարգավիճակով կը մնայ Ատրպէյճանի կազմում, իսկ Պաքուի պատուիրակութիւնը համաձայնելու էր ցանկացած կարգավիճակի, բայց Ատրպէյճանի կազմում:

90-ականներին ընթացող բանակցութիւններում աւելի շատ քննարկում էին հակամարտութեան հետեւանքների վերացման խնդիրները՝ տարածքներ, փախստականներ ու տեղահանուածներ, անվտանգութեան երաշխիքներ:

Արցախի կարգավիճակի խնդիրը ամենաբարձր մակարդակով առաջին անգամ քննարկուեց, աւելի ճիշտ՝ պարտադրելու փորձարուեց Լիսաբոնում՝ 1996-ի Դեկտեմբերի առաջին օրերին՝ ԵԱՀԿ գաղաթափողովում: Ռուսաստանը, ԱՄՆ-ն ու ամբողջ ԵԱՀԿ-ն, Ատրպէյճանի գլխավորութեամբ, Արցախի համար առաջարկեցին ինքնավարութեան բարձր կարգավիճակ՝ Ատրպէյճանի կազմում:

Լեւոն Տէր-Պետրոսեանը մերժեց այն: Հանպատրաստից նրա ելույթը կարող է տեղ գտնել հայ քաղաքական մտքի պատմութեան մէջ. «Ղարաբաղեան հիմնախնդիրը Ատրպէյճանի կողմից առաջարկուած սկզբունքների հիման

վրայ լուծելու դէպքում Լեւոնային Ղարաբաղի բնակչութեան վրայ կախուած կը լինի ցեղասպանութեան կամ բռնի տեղահանութեան մշտական սպառնալիքը: Սուսկայիթի (1988թ. Փետրուար), Կիրովաբադի (1988թ. Նոյեմբեր) եւ Պաքուի (1990թ. Յունուար) հակահայկական ջարդերի, ինչպէս նաեւ Ղարաբաղի 24 հայկական գիւղերի բնակչութեան տեղահանութեան (1991թ. Մայիս Յունիս) փորձը ամենայն ակներեւութեամբ ցոյց է տալիս, որ Ատրպէյճանը, չնայած բոլոր հաւաստիացումներին, չի կարող Լեւոնային Ղարաբաղի բնակչութեան անվտանգութեան երաշխիքներ ապահովել: Ուստի, մենք այն կարծիքին ենք, որ նոր ողբերգութեան բացառման միակ հնարաւորութիւնը Լեւոնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի յարգումն է»:

Թէեւ Տէր-Պետրոսեանը օգտուեց Հայաստանի վետոյի իրաւունքից, միեւնոյն ժամանակ նա քննադատութիւնների տարափի տակ յայտնուեց հայկական ընդդիմութեան եւ սփիւռքի կողմից:

Պէտք է չի շեցնել, որ այդ օրերին, յատկապէս Հարաւսլաւիայում տեղի ունեցող գործընթացների ֆոնին, ինքնորոշման իրաւունքի յարգումը ժողովրդայնութիւն էլ վայելում աշխարհում: Հայաստանի դաշնակից համարուող Ռուսաստանը անգամ հանդէս եկաւ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան օգտին, ինչպէս ԵԱՀԿ միւս երկրներ-

ըր: Եւ միայն Հայաստանի վետոյի շնորհիւ այդ փաստաթուղթը չպարտադրուեց Արցախին:

1997-ի գարնանն ու ամրանը, ԵԱՀԿ-ն փաթեթային մի քանի տարբերակ ներկայացրեց կողմերին, որոնցից մէկը՝ պաշտօնապէս: Դրանում կրկին Արցախը դուրս էր Ատրպէյճանի կազմում՝ ամենաբարձր ինքնավարութեամբ: Հայկական կողմը, բնական է, մերժեց այն: 1997-ի աշնանը, երբ ԵԱՀԿ-ն ներկայացրեց փուլային տարբերակը, Հայաստանը այն ընդունեց, իսկ Արցախը մերժեց: Փուլային տարբերակում որեւէ բառ չկար Արցախի կարգավիճակի մասին, այն թողնուած էր ապագային՝ յաջորդ փուլին: Այդ տարբերակով, ինչպէս դրանից առաջ եւ յետոյ ներկայացուած առաջարկներն էին, հայկական կողմին առաջարկուած էր դուրս գալ նախկին ԼՂԻՄ-ից դուրս գտնուող 6 կամ աւելի շրջաններից:

1998-ի ընդհանուր պետութիւն կոչուած առաջարկում ասուում էր. «ԼՂ-ն հանրապետութեան ձեւի պետական եւ տարածքային կազմաւորում է եւ Ատրպէյճանի հետ միասին կազմաւորում է եւ Ընդհանուր պետութիւն եւ՝ նրա միջազգայնօրէն ճանաչուած սահմաններում»:

Քի վետոյի 2001թ. փաստաթղթում, որը ոչ պաշտօնական բնույթ էր կրում, ԼՂ-ն միացուած էր Հայաստանին: Ճիշտ է, դրա դիմաց Հայաստանը, բացի 6,5 շրջաններ զիջելուց, Ատրպէյճանին Նախիջևանի հետ կապուելու համար «սուվերեն միջանցք» էր տրամադրում:

Եւ վերջապէս, մադրիդեան առաջարկներում եւ ածանցեալ կազանի ոչ պաշտօնական փաստաթղթում Արցախի կարգավիճակի համար տեղ է գտել յետաձգուած հանրաքուէի գաղափարը:

«Civilnet.am»

Սուլայեր Նախարարների Հայաստանը. Կառավարութեան Խոստումներն ու Իրականութիւնը

ՆԱՅԻՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Այս շաբաթ խորհրդարանում Նիկոլ Փաշինեանի կառավարութեան ծրագրի քննարկման ժամանակ Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր Սասուն Միքայէլեանը հարցրեց վարչապետին՝ մեր երկրում խորհրդարանակա՞ն կառավարման ինստիտուտն է ճիշտ, թէ՞ նախագահական: Ի պատասխան՝ վարչապետն ասաց, որ խորհրդարանական կառավարման համակարգը դեռ պէտք է աշխատի: «Ես հիմա Սահմանադրութեամբ կառավարութեան ծրագիրն եմ ներկայացնում, լայն եւ բոլորն քննարկում է տեղի ունենում, յետոյ ծրագրի կատարման զեկոյց է լինելու, ԱԺ-ի հետ հարցուպատասխան, պիւտձէի կատարողական, պիւտձէի նախագծի քննարկում: Ես անկեղծ ասացի ԱԺ նախագահին՝ եթէ այս առիթները չունենայի եւ լինէի այն լիազորութիւններով հանրապետութեան նախագահ, այդ վիճակին չէի դիմանայ», - ասաց նա: Նշենք, որ Նիկոլ Փաշինեանի՝ վարչապետ դառնալուց յետոյ այս հարցը շատ է քննարկուել, քանի որ ընդդիմադիր գործունէութիւն ծաւալելու ժամանակ թէ՛ նա, թէ՛ իր գործընկերները քննադատում էին, այսպէս կոչուած, սուպերվարչապետական համակարգը: Սակայն, ըստ էութեան, այժմ այն փոխելու ուղղութեամբ դեռեւս գործուն քայլեր չկան: Ընդամէնը 2018 թուականի Մայիսի 8-ին՝ վարչապետի պաշտօնում ընտրուելուց յետոյ, վարչապետը լրագրողներին հետ գրոցում, երբ լրագրողները հարց էին

տուել, թէ որ լիազորութիւնն է կրճատելու, վարչապետն արձագանքեց. «Ես ասել եմ արդէն, որ սուպերվարչապետական համակարգ պէտք է չլինի»: Մայիսի 8-ից արդէն 8 ամիս է անցել, եւ արդէն պաշտօնապէս շրջանառութեան մէջ է դրուել կառավարութեան կառուցուածքում փոփոխութիւններ կատարելու մասին նախագիծը, սակայն նախագիծն ուսումնասիրելուց այնպիսի տպաւորութիւն է ստեղծուում, որ նորընտիր կառավարութիւնը ոչ թէ քայլեր է անում այդ համակարգը ոչնչացնելու, այլ այն աւելի է ամրապնդում, եւ դեռ աւելին՝ ստեղծում է նաեւ սուպերնախարարութիւններ: Բանն այն է, որ այդ նախագիծով առաջարկուած է ստեղծել Սփիւռքի գործերի գլխաւոր յանձնակատարի գրասենեակ, սակայն փաստ է, որ յանձնակատարը կրկին ենթարկուելու է վարչապետին: Մասնաւորապէս, նրա լիազորութիւնների դրոյթներում ամրագրուած է.

Սփիւռքի գործերի գլխաւոր յանձնակատարի պաշտօնը պետական հայեցողական պաշտօն է, որը զբաղեցնող անձը ենթակայ եւ հաշուետու է Հայաստանի Հանրապետութեան վարչապետին:

«Սփիւռքի գործերի գլխաւոր յանձնակատարի գրասենեակի ղեկավարի պաշտօնը պետական վարչական պաշտօն է, որը զբաղեցնող անձը ենթակայ է Հայաստանի Հանրապետութեան վարչապետին, հաշուետու է Սփիւռքի գործերի գլխաւոր յանձնակատարին», ասուում է նախագիծում: Ասել է թէ՛ վարչապետին ենթարկուող եւս մէկ կառուց է լինելու՝ դրանից բխող

բոլոր հետեւանքներով հանդերձ: Էլ չենք խօսում սուպերնախարարութիւնների մասին: Մշակույթի, Սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութիւնները միանում են կրթութեան եւ գիտութեան նախարարութեանը՝ վերանուանելով կրթութեան, գիտութեան եւ մշակույթի նախարարութիւն: Այս բոլոր ոլորտներն արդէն խոշոր են եւ միաւորուելով՝ վերածուում են սուպերնախարարութեան: Բանն այն է, որ էներգետիկ ենթակառուցուածքների եւ բնական պաշարների նախարարութիւնը միանում է Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարութեանը՝ վերանուանուելով Տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքների նախարարութիւն, որին փոխանցուած են նաեւ Տրանսպորտի, կապի եւ տեղեկատուական տեխնոլոգիաների նախարարութեան կողմից իրականացուող տրանսպորտի (այդ թւում՝ ճանապարհների) ոլորտին առնչուող բոլոր լիազորութիւնները եւ գործառույթները: Օրէնքի ընդունումից յետոյ, կառավարութեան որոշմամբ, այս նախարարութեան ենթակայութեանը կը յանձնուեն Պետական գոյքի կառավարման կոմիտէն եւ Զրային կոմիտէն: Սա թերեւս ամենաահուելի նախարարութիւնն է լինելու, ընդ որում՝ դեկավարելով ամենակարեւոր ոլորտները: Այս առումով պատահական չէ, որ այս գերատեսչութեան ղեկավարումն էլ կը վստահեն հենց Սուրէն Պապիկեանին, որ Նիկոլ Փաշինեանի համար ամենավստահելի մարդկանցից մէկն է:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՎԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱՋԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՂԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աւարտած է Ռ. Քոչարեանի, Ս. Օհանեանի, Ե. Խաչատուրովի եւ Ա. Գեորգեանի Քրեական Գործերու Նախաքննութիւնը



Ռոպերթ Քոչարեանի, Սեյրան Օհանեանի, Երուրի Խաչատուրովի եւ Արմէն Գեորգեանի վերաբերեալ քրեական գործի նախաքննութիւնը աւարտած է: Այս մասին կը տեղեկացնէ Հայաստանի Յատուկ Քննչական Մառաշուքեան պաշտօնական կայքէջը: «2008 թուականի Մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատուածում Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձութիւնների վերաբերեալ Յատուկ Քննչական Մառաշուքեան քննուող քրեական գործով վարույթն իրականացնող մարմինը, համարելով, որ գործով ձեռք բերուած ապացույցները բաւարար են Հայաստանի Հանրապետութեան պաշտօնաթող նախագահ Ռոպերթ Քոչարեանի, Ջինուած ուժերի գլխաւոր շտապի պետի պաշտօնը զբաղեցրած Սեյրան Օհանեանի, Պաշտպանութեան նախարարի տեղակալի պաշտօնը զբաղեցրած Երուրի Խաչատուրովի եւ նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտօնը զբաղեցրած Արմէն Գեորգեանի վերաբերեալ մեղադրական եզրակացութիւն կազմելու եւ գործը դատարան ուղարկելու համար, վերը նշուած անձանց մասով քրեական գործի նախաքննութիւնն աւարտել է», - ըստ լուր է ԶԳԾ-ի տարածած հաղորդագրութեան մէջ:

Ռոպերթ Քոչարեանը կը մեղադրուի սահմանադրական կարգը տապալելու եւ առանձնապէս խոշոր չափերով կաշառք ստանալու մէջ: Սեյրան Օհանեանը եւ Երուրի Խաչատուրովը կը մեղադրուին սահմանադրական կարգը տապալելու մէջ: Արմէն Գեորգեանը կը մեղադրուի սահմանադրական կարգը տապալելուն օժանդակելու, առանձնապէս խոշոր չափերով կաշառք ստանալու եւ յանցաւոր ճանապարհով ստացած գոյքը օրինականացնելու մէջ:

Խարդախութեան Սեղադրանք Սերժ Սարգսեանի Եղբոր Դէմ

Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի եղբայրը՝ Ալեքսանտր Սարգսեանը Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) կողմէ յարուցուած քրեական գործով որպէս մեղադրեալ ներգրաւուած է, այս մասին «Ազատութեան» փոխանցած է անոր պաշտպան Միհրան Պողոսեանը: Ըստ պաշտպանի, Սարգսեանը տակաւին անցած ամրան կը մեղադրուէր Քրեական օրէնսգիրքի 178-րդ յօդուածի յատկանիշերով՝ խարդախութեան համար: Պողոսեանը ըսած է, որ խօսքը կը վերաբերի Մարտիրոս Սարեանի գծանկարներուն: Ալեքսանտր Սարգսեանի խափանման միջոց ընտրուած է ստորագրութիւնը չհեռանալու մասին: Փաստաբանը առաջադրուած մեղադրանքը անհիմն որակած է: Յուլիս 4, 2018-ին Ազգային անվտանգութեան ծառայութիւնը շուրջ 9 ժամ խուզարկած էր Երեւանի թումանեան 11 հասցէի վրայ գտնուող Սարգսեաններու բնակարանը, որմէ ետք Ալեքսանտր Սարգսեանը բերման ենթարկուած էր: Աւելի ուշ ԱԱԾ-ը հաղորդագրութիւն տարածած էր՝ նշելով, որ Ալեքսանտր Սարգսեանը հարցաքննուած է որդիին՝ Նարեկ Սարգսեանի կողմէ Մարտիրոս Սարեանի 14 գծանկարներու յափշտակութեան մասին մեղադրանքներու առնչութեամբ:



Սերժ Սարգսեանի եղբայր՝ Ալեքսանտր Սարգսեան

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը Նարեկ Սարգսեանին պատկանող տարածքներուն եւ անոր հօր բնակարանին մէջ խուզարկութեամբ յայտնաբերած էր գումար, թմրանիւթ եւ Մարտիրոս Սարեանի նկարներ, որոնք, ըստ ԱԱԾ հաղորդագրութեան, Նարեկ Սարգսեանը ստացած է Մարտիրոս Սարեանի ժառանգներէն մէկուն վստահութիւնը չարաչահելով: Նշենք, որ 62-ամեայ Ալեքսանտր Սարգսեանը, որ աւելի յայտնի է Սաշիկ անունով, 2003-2011 թուականներուն եղած է Ազգային ժողովի պատգամաւոր, մամուլը անոր անունը կը կապէ բազմաթիւ պիզնեսներու հետ:

Արարատ Միրզոյեանը Կողմ Չէ Կիսանախագահական Հանրապետութեան Կերտարծին

«Մենք հիմա ունենք խորհրդարանական համակարգ եւ պիտի ամէն ինչ անենք այդ համակարգի կայացման համար», - համոզմունք յայտնած է Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանը: Ան կողմ չէ կիսանախագահական համակարգի վերադարձին: Մէկ տարուան ընթացքին սահմանադրական հանրաքուէ իրականացնելու եւ կիսանախագահական կառավարման համակարգին վերադառնալու առաջարկը անցած շաբաթավերջին ըրած էր Հայ ազգային քոնկրեսը: Առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ղեկավարած ուժը նաեւ կը կարծէ, որ սահմանադրութիւն փոխելէ ետք մեկ տարուան ընթացքին ալ անհրաժեշտ է իրականացնել նախագահական ընտրութիւններ, փոխել Ընտրական օրէնսգիրքը՝ անցում կատարելով 100 տոկոս համահամանական ընտրակարգի: Իշխանական «Իմ քայլը» դեռ պաշտօնապէս չէ արձագանգած արտախորհրդարանական Հայ ազգային քոնկրեսին (ՀԱԿ): Միրզոյեան ըսած է, որ իր կարծիք ներկայացնէ: Սահմանադրական փոփոխութիւններ, ըստ Աժ նախագահի, հնարաւոր են, բայց ոչ այնքան մաշտապային, որ կրկին երկրի կառավարման մոտեւ փոխուի: Ան չէ բացառած, որ նախագահի լիազօրութիւններուն եւս անդրադարձ ըլլայ՝ անոնք աւելցնելու առումով: «Կիսանախագահական համակարգին վերադարձ կատարելուն եւ կողմնակից չեմ: Ես կարծում եմ, որ պէտք է շարունակել առաջ գնալ. մենք հիմա ունենք խորհրդարանական համակարգ եւ պիտի ամէն ինչ անենք»:



Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեան

այդ համակարգի կայացման համար»: Կիսանախագահական է նախորդարանական կառավարման անցնելը Սերժ Սարգսեանի գաղափարն էր: Ընդդիմադիրներու պնդմամբ՝ նախագահական 10 տարիներէն ետք ալ երկրի ղեկը արդէն որպէս վարչապետ իր ձեռքը պահելու նպատակով: Կիսանախագահական համակարգին վերադարձը յետընթաց կը համարէ «Լուսաւոր Հայաստանի» ղեկավար էտմոն Մարուքեանը: Երկիրը, ինչպէս ըսած է ան, նախ պէտք է խորհրդարանական դարձնել: Ընդդիմադիր պատգամաւորի խօսքով, այսօր այն վարչապետական է. - «Խորհրդարանը պէտք է իրական լծակներ ունենայ գործադիր իշխանութեանը վերահսկելու համար: ...օրինակ, հիմա խորհրդարանը ի՞նչ լիազօրութիւն ունի. մի հատ վարչապետին ընտրում ա ու վերջ, էլ ոչ մի բանում չի կարող միջամտել: Ո՛չ կառավարութեան կառուցուածքի իմաստով, ո՛չ ձեւաւորման, ո՛չ պաշտօնների»:

ԱԱԾ-ն Հրապարակած է Սեղրակ Քոչարեանի Քրեական Գործի Մանրամասնութիւնները

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը կը յայտնէ, որ Հայաստանի, երկրորդ պաշտօնաթող նախագահ Ռոպերթ Քոչարեանի մեղադրանք առաջադրուած է խոշոր չափերու հարկեր չվճարելու եւ յանցաւոր ճանապարհով ձեռք բերուած եկամուտները օրինականացնելու յօդուածներով: ԱԱԾ-ի տարածած հաղորդագրութիւնը Սեղրակ Քոչարեանի պաշտպանները դեռ չեն մեկնաբանած, մինչ այդ Ռոպերթ Քոչարեանի գրասենեակի ղեկավար Վիքթոր Սողոմոնեանը յայտնած է, որ Սեղրակ Քոչարեանը կը պատրաստուի դատի տալ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան՝ իր անմեղութեան կանխավարկածը կոպտօրէն խախտելու համար: Սեղրակ Քոչարեանը երկրորդ նախագահի ոչ պաշտօնական կայքին տուած հարցազրույցի ժամանակ նշած էր, որ իրեն մեղադրանք առաջադրած են շինծու գործով մը: ԱԱԾ-ն մասնաւորապէս յայտնած է, որ, ըստ իրենց ուսումնասիրութեան, Սեղրակ Քոչարեանը իր հիմնադրած ընկերութիւններէն մէկուն մէջ կազմակերպած եւ ղեկավարած է հարկման հաշուարկներուն մէջ ահնայատ կեղծ տուեալներ մտցնելու եւ առանձնապէս խոշոր չափերով եկամտային հարկ



Ռոպերթ Քոչարեանի աւագ որդի՝ Սեղրակ Քոչարեան

չվճարելու գործընթաց, որմէ ետք, ցանկալով թաքցնել պետական պիւտձէ չվճարուած հարկի ծագման աղբիւրը, այն օրինականացուցած է շարք մը դրամատնային փոխանցումներ կատարելով: ԱԱԾ-ի տարածած հաղորդագրութեան մէջ նշուած է՝ ի վերջոյ Սեղրակ Քոչարեանը պետական պիւտձէ չվճարուած հարկէն առաջացած գումարները միախառնած է իր դրամատնային հաշիւին եղած միլիոններուն հետ, անոնց օրինական տեսք տալու համար, եւ ի վերջոյ այդ եկամուտները ուղղած է Երեւանի «Պեսթ Ուեսթըրն Քոնկրետ» հիւրանոցը ձեռք բերելուն:

ԼՈՒՐԵՐ

Իսրայելական Aeronautics Ընկերությունը Նոր Համաձայնագիր Կնքած է Ատրալանտիկ Յանտարարության հետ

Իսրայելական Aeronautics ընկերությունը նոր համաձայնագիր կնքած է Ատրալանտիկ Յանտարարության հետ՝ յառաջիկայ երկու տարուան ընթացքին 13 միլիոն տոլարի հարուստացման անողաչու թռչող սարքեր մատակարարելու վերաբերյալ:

Համաձայնագիրը կնքուած է ընկերությունների համախմբի պաշտպանության նախարարության սկսած հետաքննությունից հետո, երբ պարզուած էր, որ 2017-ին նույն այդ ընկերությունը, պաշտպանական Պաշտպանության համաձայնագրի Orbiter 1K տեսակի անողաչու թռչող սարքի կարողությունները ցուցադրել մարտական պայմաններում մեջ՝ հարուստացման հասցնելով հայկական դիրքերին մեկուսի ուղղությունում: Վերադարձված էր երեք հայ զինծառայող:

Միջադեպի մանրամասները յայտնի չեն, գործը կը քննուի դաշնային նիստի ընթացքին: Տեղական լրատուամիջոցները, սակայն, կը պնդեն, որ սկիզբը ընկերության շարքային աշխատակիցները հրաժարուած են գնել փորձարկել մարդոց ուղղությունում, սակայն աւելի ուշ Պաշտպանության ընկերության ղեկավարներն ու ստանձնած անողաչու թռչող սարքի կառավարումը:

Միջադեպը մեծ աղմուկ բարձրացուցած էր, Իսրայելի իրաւապահները մեղադրանքներ առաջադրած էին ընկերության ղեկավարներուն, ինչպէս նաեւ՝ արգելանք դրած օտարերկրեաց արտահանումներուն վրայ:

Քննուած թիւերը չաւարտուած, սակայն, փետրուարի սկիզբը անակնկալ յայտարարուած է, թէ Իսրայելի պաշտպանության նախարարութիւնը վերանայած է իր որոշումը ու վերացուցած է արտահանումներու արգելանքը: Երկու շաբաթ չանցած Aeronautics Defense Systems-ը հաղորդած է, որ բազմամիլիոնանոց համաձայնագիր կնքած է առանցքային գործընկերոջ հետ: Վաճառուող գէնքը՝ Orbiter 1K տեսակի անողաչու թռչող սարքը կրնայ 1-2 քվ. պայթուցիկ նիւթ տեղափոխել, շուրջ երեք ժամ մնալ օդին մէջ, բազմազգայական (multi-sensor) տեսախցիկով ցերեկային եւ գիշերային նկարահանումներ կատարել, պարսպարկով արձակուելէ ետք ինքնուրոյն կը հսկէ տարածութիւնը, կը գտնէ ու կ'ոչնչացնէ շարժող ու անշարժ թիրախներ: Իսկ եթէ սարքը թիրախը չգտնէ, կը վերադառնայ ռազմակայան:

2016-ին Ատրալանտիկ Յանտարարության հետ սկիզբը դեռ պաշտպանական չէ արձագանգած: Աւելի վաղ՝ ամսուան սկիզբը, արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Աննա Նաղտալեանը յայտարարած էր, որ պաշտպանական Երեւանը կը պատրաստուի բարձրաձայնի հարցը երկկողմ եւ բազմակողմ հանդիպումներու ժամանակ:

«Պէտք է ուղղակի ընդգծենք եւ մեր միջազգային գործընկերներին մշտապէս յղենք այն ուղերձը, որ մեր տարածաշրջանում սպառազինութիւնները մրցակցութիւնը չպիտանանք վտանգաւոր է», - ըսած էր Նաղտալեանը:

Իսրայելի պաշտպանական աղբիւրները չեն մեկնաբանած, թէ ինչու վերստին թոյլատրած են գնել մատակարարուած ատրալանտիկ ճանակարանային: Փորձագէտները, սակայն, պատահական չեն համարեր, որ որոշումը կայացուած է ճիշդ այն օրերուն, երբ Հայաստանի վարչապետը յայտարարած է, որ կը պատրաստուի փետրուարի վերջը պաշտպանական այց կատարել Իսրայելի հետ թշնամական յարաբերութիւններով յայտնի իրան:

ԱՄՆ-ը Դէմ է Սուրիոյ մէջ Հայաստան Ռուսաստան Համագործակցութեան

Միացեալ Նահանգներու Պետական քարտուղարութիւնը արձագանգած է Հայաստանէն մասնագէտներու 83-հոգինոց խումբի Սուրիա գործողման, ընդգծելով, որ չի պաշտպաներ Սուրիոյ զինուած ուժերու հետ ներգրաւուածութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ համագործակցութիւնը այս առաքելութեան նպատակով:

«Մեզի հասկնալի է Սուրիոյ մարդասիրական իրավիճակին արձագանգելու այլ պետութիւններու ցանկութիւնը, եւ մենք կը կիսենք Մերձավոր Արեւելքի մէջ փոքրամասնութիւններու պաշտպանութեան շուրջ մտահոգութիւնները», - ըսուած է Պետական քարտուղարութեան՝ լրատուամիջոցներու հարցումներուն տրուած պատասխանին մէջ, որ տրամադրած են Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանատունէն: «Անուհանդերձ, մենք չենք պաշտպաներ Սուրիոյ զինուած ուժերու հետ ներգրաւուածութիւնը՝ ըլլալ քաղաքացիական անձերու օգնութիւնը ցուցաբերելու նպատակով, թէ ռազմական ուղղուածութեան: Մենք նաեւ չենք պաշտպաներ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ համագործակցութիւնը այս առա-

քելութեան նպատակով»: «Ռուսիա գործակցած է Ասատի վարչակարգին հետ՝ կոտորածի ենթարկելով քաղաքացիներ եւ պատճառ դառնալով մարդասիրական աղէտի: Ռուսիա կը շարունակէ համաշխարհային հարթակի վրայ հանդէս գալ Ասատի վարչակարգին եւ վերջինիս վայրագութիւններու պաշտպանութեան դիրքերէն», - յայտարարած է Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքական գերատեսչութիւնը:

Յիշեցնենք, որ 8 փետրուարին հաղորդուած էր, որ արդէն Հայկական հասարակական ակնազնեւորողներէ, բժիշկներէ եւ անոնց անմիջական անվտանգութիւնը ապահովող հայ մասնագէտներէ բաղկացած 83-հոգինոց խումբը: Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան փոխանցմամբ, որոշումը կայացուած է՝ նկատի առնելով Սուրիոյ եւ յատկապէս Հայկական քաղաքի մէջ ռազմական գործողութիւններու հետեւանքով ստեղծուած ծանր վիճակը, ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդի բանաձեւերը, սուրիական կողմի գրաւոր խնդրանքները, ինչպէս նաեւ Հայկական մէջ մեծաթիւ հայկական համայնքի առկայութիւնը:

Հայաստանը կը Նախատեսէ Ռուսաստանէն Գնել 12 Սու-30ՍՄ Կործանիչներ



ՀՀ պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեան կը մասնակցի IDEX-2019 ցուցահանդեսին

Հայաստան կը ծրագրէ մինչեւ 2019-ին վերջ կամ 2020-ի սկիզբը ստանալ 4 ռուսական Սու-30ՍՄ կործանիչ, իսկ, ընդհանուր առմամբ, Երեւան կը ցանկայ գնել 12 այդպիսի կործանիչներ: Այս մասին կը հաղորդէ «Ռիա նովոսթի»-ն, նշելով, որ IDEX-2019 ցուցահանդէսի ժամանակ այս մասին ըսած է ՀՀ պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեան:

«Մենք կը շարունակենք բանակցութիւնները Սու-30ՍՄ կործանիչներու յաջորդ խմբաքանակի մատակարարման շուրջ: Ամէն ինչ կախուած է անկէ, թէ որքան արագ պատրաստ կ'ըլլայ այդ արտադրանքը: Մենք կը ծրագրենք առաջին խմբաքանակը ստանալ այս տարուան վերջին, ծայրայեղ

պարագային՝ յաջորդ տարուան սկիզբը», - ըսած է Տօնոյեան:

Պատասխանելով հարցին, թէ ընդհանուր առմամբ քանի՞ կործանիչ կը ցանկար Հայաստանը գնել, Դաւիթ Տօնոյեան պատասխանած է, որ խօսքը մէկ օդանավային դասակ (12 կործանիչ) մասին է:

Աւելի վաղ ՀՀ պաշտպանութեան նախարարութեան մամուլ քարտուղար Արծրուն Յովհաննիսեանը յայտարարած էր, որ Երեւանը կը ծրագրէ Ռուսաստանի Դաշնութենէն գնել 4 Սու-30ՍՄ: Պաշտպանութեան նախարարութեան նաեւ յայտնած էին, որ նախապէս ռուսական կողմի տրամադրած 100 միլիոն տոլար վարկի շրջանակէն ներս սպառազինութեան ձեռքբերման գործընթացը իրականացման փուլի մէջ է:

Արցախի Խնդիրը Կրնայ Շատ Վտանգաւոր Ըլլալ, Եթէ Ծիշդ Չկառավարուի Նախագահ Սարգսեան

Փոքր տարածաշրջանին մէջ, որ կը կոչուի Լեռնային Ղարաբաղ, որ մենք կ'անուանենք Արցախի Հանրապետութիւն, սառեցուած համարտութիւնը քանի դեռ կարգաւորուած չէ, կրնայ շատ վտանգաւոր ըլլալ, եթէ ճիշդ չկառավարուի: Ինչպէս կը յայտնէ ՀՀ նախագահի մամուլի ծառայութիւնը, այս մասին ըսած է ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան, ելոյթ ունենալով Գերմանիոյ Հայտնաբերող համալսարանի ռուսաստաններու եւ դասախօսներու առջեւ:

«Ինծի համար չկայ այլ ուղի, քան հակամարտութիւնը կարգաւորել խաղաղ ճանապարհով: Ցանկացած այլ տարբերակ բոլորին համար պիտի ըլլայ բացարձակ կործանարար: Եւ այստեղ կարելոր է, թէ որքան հզօր ես, սպառազինութեան վրայ որքան գումար կը ծախսես կամ որքան մեծ է բանակը: Այս տարածքին մէջ կեդրո-

նացած են տարբեր հետաքրքրութիւններ, մարտահրաւէրներ: Սա իսկապէս տարբեր քաղաքակրթութիւններու խաչմերուկ է: Տեսէք, թէ ինչ տեղի կ'ունենայ. Սուրիան, Մերձավոր Արեւելքը շատ հեռու չեն, կամ Իրանը, Ատրալանտիկ, Վրաստանը, Հայաստանը, Թուրքիան, Ռուսիան», - ըսած է ան:

Ըստ Սարգսեանի՝ այստեղ նույնիսկ ամենափոքր ապակաշունացնող երեւոյթը շատ կործանարար պիտի ըլլայ: Ուստի կայ միայն մէկ ուղի՝ հակամարտութեան խաղաղ հանգուցալուծումը:

Սարգսեան յոյսով է, որ հակամարտութեան կարգաւորումը հիմնուած պիտի ըլլայ բանակաւորութեան, մարդկային արժէքներու վրայ: Ան նաեւ յոյսով է, որ վերջնական լուծումը պիտի ըլլայ՝ հաշուի առնելով Լեռնային Ղարաբաղի բնակչութեան իրաւունքները:

Թեղուտի Հարցով Երոդատարանը Հայաստանի Դէմ Եւս 6 Վճիռ Հրապարակած է

Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանը (ՄԻԵԴ) Հայաստանի Հանրապետութեան դէմ հրապարակած է 6 վճիռ, ըստ որոնց՝ Թեղուտի մէջ մօտ 10 տարի առաջ հանքարդիւնաբերութեան նպատակով գիւղացիներուն ապօրինի սեփականագրկած են: 6 ընտանիք ընդհանուր առմամբ պետութենէն սեփականութեան իրաւունքի խախտման համար որպէս փոխատուցում պիտի ստանայ 70 հազար եւրո: Յիշեցնենք, նմանատիպ գոր-

ծով Եւրոպական դատարանը առաջին վճիռը կայացուցած էր անցած տարուան Նոյեմբերին: Թեղուտ գիւղի բնակիչ Սերոբ Օսմանեանը եւ Սթրասպուրկի դատարանի վճիռով պետական պիւտճէն պիտի ստանայ 10 հազար եւրո:

Թեղուտի մէջ հանքարդիւնաբերութիւն իրականացուցած «Թեղուտ» ՓԲԸ-ն գիւղացիներու սեփական հողատարածքներուն դիմաց վճարած էր չնչին գումարներ՝ մէկ քառակուսի մեթրի դիմաց 36-60 դրամ:

Հայաստանի Մէջ Նշուեցաւ Յովհաննէս Թումանեանի Ծննդեան 150-ամեակը

19 Փետրուարին, հայ ժողովուրդը կը տօնէ Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150-ամեայ յոբելեանը:

Թէ՛ մայրաքաղաքի, թէ՛ մարզերու բոլոր նախադպրոցական հաստատութիւններուն, դպրոցներուն, գրադարաններուն, թանգարաններուն մէջ տարբեր նախաձեռնութիւններով յատուկ նախապատրաստուած են այս յոբելեանին:

Յիշեցնենք, որ տարիներ առաջ մեծ բանաստեղծի օրը Հայաստանի գրողներու միութեան կողմէն յայտարարուած էր «Գիրք նուիրելու օր»:

Բանաստեղծի մայրաքաղաքի մէջ գտնուող տուն-թանգարանը մարդաշատ էր: Թանգարանը իր այցելուներուն համար յատուկ ծրագիրներ նախապատրաստած էր, թէ՛ Թումանեանի հիւրընկալ յարկի ներքոյ, թէ՛ թանգարանին յարող տարածքին մէջ, ուր դպրոցականները առտուրնէ խումբ-խումբ արտասանած, երգած եւ ունկնդրած են տարբեր երաժշտական համոյթներու:

Առտուրնէ մարդաշատ եղած է նաեւ բանաստեղծի ծննդավայրը՝ Դսեղը, ուր գտնուող բանաստեղծի



տուն- թանգարանը շատոնց ուխտատեղի դարձած է թերեւս իւրաքանչյուր հայ մարդու համար:

Իսկ Թիֆլիսի մէջ գտնուող անոր տունը, ուր բանաստեղծը ապրած է իր բազմադամ ընտանիքով, եւ որ այժմ հայկական մշակոյթի կեդրոնն է, նոյնպէս բնականաբար անմասն չէ մնացած յոբելեանական նախաձեռնութիւններէն:

Թիֆլիսի հայ գրողներն ու հասարակական գործիչները Հասարակական

յաստանէն ժամանած պատուիրակութեան հետ իրենց յարգանքի տուրքը մատուցած են մեծ գրողի յիշատակին՝ ծաղիկներ խոնարհելով Խոջիվանքի մէջ գտնուող Յովհաննէս Թումանեանի շիրիմին: Իսկ երեկոյեան Վրաստանի Խորհրդարանի ազգային գրադարանին մէջ տեղի ունեցած է գրական-գեղարուեստական երեկոյ «Թումանեանը մեզ հետ է» խորագրի ներքոյ: «Ազատութեան» հետ գրոյցի

ժամանակ եղիչէ Ջարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանի տնօրէն Կարօ Վարդանեանը ըսած է. - «Իր կեանքի վերջին հանգրուանում նա ոչ թէ իր ժողովրդի գաւազն էր, այլ հայրն էր, հայրական իրաւունքներ ունէր, իր ժողովրդին նուիրեց այն ամէն նուիրականը՝ ընդհուպ իր տասը գաւազներին. տղաներին՝ որպէս գինուոր, աղջիկներին՝ գթութեան քոյրեր: Մենք ուղղակի իրաւունք չունենք ուրանալու եւ չվերծանելու նրանց ապրած օրն ու ժամը»:

Հարցին, թէ արդեօք չկայ այսօրուայ հայեացքով ուսումնասիրելի Թումանեանի ժառանգութիւնը, Վարդանեանը արձագանգած է. - «21-րդ դարը որպէս հանգրուան ընդունելով՝ պիտի թումանեանին նայենք... նրա համալիր դերը պիտի բարձրացնենք: Ամիսներ առաջ ի՞նչ ազնիւ յորձանք բխեց, եւ կարգախօսը՝ սէր եւ համերաշխութիւն: Հենց սէրն ու համերաշխութիւնը Թումանեանն է, չէ՞: Եկէք փարուենք նրան, եւ հենց դա էլ կը լինի 21-րդ դարի հայեացքը: Միաբան, համերաշխ, միակամ Հայաստանի եւ հայութեան հայեացքը»:

Հայաստանի Պատուոյ Պահակային Վաշտը Տպաւորիչ Ելոյթ Ունեցած Է Ապու Տապիի IDEX-2019 Ցուցահանդէսին



Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան պատուոյ պահակային վաշտը Ապու Տապիի մէջ դիտարժան ելոյթով հանդէս եկած է IDEX-2019 ցուցահանդէսին, որուն կը մասնակցի նաեւ ՀՀ պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեան: Ըստ Armenpress.am-ի՝ ՀՀ ՊՆ

պատուոյ պահակային վաշտի տպաւորիչ ելոյթին տեսանիւթը տարածուած է հասարակական ցանցերու մէջ: IDEX-2019 ցուցահանդէսին ներկայացուած է նաեւ հայկական ռազմարդիւնաբերական ձեռնարկութիւններու տաղաւար:

Բացաիկ Յաջողութեամբ Պսակուեցաւ

Շարունակուած է 1-էն եկաւ Լոս Անձելոսի Հայաստանի աւագ հիւպատոս Տիար Արմէն Բալբուրդեան: Ան բարձր գնահատեց հայ-ամերիկեան թանգարանի մը նախաձեռնութիւնը եւ անոր արդիւնաւետութիւնը հայապահպանման եւ Հայրենիք սփիւռք կապերու առաւել սերտացման գծով: Այնուհետեւ Պր. Ա. Բալբուրդեան կարգաց Հայաստանի վարչապետ Ն. Վ. Նիկոլի Բաշինեանի ողջոյնի գրութիւնը, որով ինք եւս իր գոհունակութիւնը կը յայտնէր այս համագաղութային պատմական կառուցիչ համար, յաջողութիւն մաղթելով կազմակերպիչներուն: Իրենց արտի խօսքերով եւ այս մեծ ծրագրի համար դրամահաւաքի սրտաբուխ կոչերով ելոյթներ ունեցան հայ գաղութի հոգեւոր առաջնորդներն ու շրջանիս հայ-

կական երեք կուսակցութիւններու ներկայացուցիչները: Աւարտին յայտարարուեցաւ եւ հեռուստակայանի այս ծրագրի կամաւոր աշխատողներու կողմէ ծափողջոյններով դիմաւորուեցաւ վեց ժամուան ընթացքին կատարուած հանգանակութեան գոհացուցիչ արդիւնքը որ էր՝ 8, 138.986 տոլար: Այս առթիւ հայ Ամերիկեան թանգարանի խնամակալ մարմնի անդամ 10 կազմակերպութիւններու անունով շնորհակալական ելոյթներով հանդէս եկան համա-ատենապետներ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան Գերշ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Գերշ. Միքայէլ Եպս. Մուրատեան եւ Վեր. Պերճ Ճամպաղեան: Վարձքը կատար սոյն գեղեցիկ եւ յաջող ծրագրի իրականացման բոլոր մասնակիցներուն: «Կառուցենք միասին փոխանցենք ժառանգութիւն»:

Փաշինեանի Կառավարութիւնը Ստացաւ

Շարունակուած է 1-էն էր ներկայացուցած առաջարկներու ընդունումով: Գազիկ Ծառուկեանի ղեկավարած խմբակցութիւնը ծրագիրներու ամբողջ գլուխ մը աւելցնելու առաջարկ ըրած էր, ուր նաեւ յստակ թիւեր պէտք է ըլլային: Փաշինեան իր եզրափակիչ ելոյթին մէջ մէկ-մէկ անդրադարձաւ ընդդիմադիրներու քննադատութեան: Նախ էտմոն Մարութեանի յայտարարութիւններուն կոշտ պատասխանեց. - «Հնարաւոր ա, բացայտում են իրենց հիմնական առաքելութիւնը... Հիմնական նախադասութիւնը հնչեց. Սերժ Սարգսեանը մեղաւոր չի, Ռոպերթ Քոչարեանն էլ չի մեղաւոր, ոնց որ մեղաւոր չի հսօրուայ կառավարութիւնը... Բացայտուեց հիմնական առաքելութիւնը, թէ էս ինչի մասին են էս մարդիկ խօսում: Հիմա ասեմ ձեզ եթէ պարզ չի, թէ Սերժ Սարգսեանը ինչով ա մեղաւոր: Մեղաւոր էր նրա համար, որ ասում էր՝ այո, ամէն մարդ չի կարգ պիտի անի, ով կը գայ կը կզի, կը մուծի, այն ա պիտի անի կ'անի: Որ ախպերը ամէն տեղ 50 տոկոս փայ էր մտած, այ դրանում ա մեղաւոր: Ու չփորձէք յանկարծ միւս անգամ ինձ եւ իրենց դնել նոյն հարթութեան վրայ: Ձեզ ու իրանց դէք նոյն

հարթութեան վրայ: Որովհետեւ դուք 2018-ին էլ էիք նոյն բանն ասում՝ ի՞նչ կապ ունի Սերժ Սարգսեանը, մենք անձերի դէմ չենք պայքարում, մենք ո՞նց կարանք անձերի դէմ պայքարենք, արի գնանք փոխնախարարի պաշտօններ ստանանք, ներսից կամաց կառուցենք... Մէկ էլ ասում են՝ յեղափոխութիւն չի եղել: Մի հատ դէմներդ ու կողքերդ նայէք. որ յեղափոխութիւն չի եղել, դուք 18 հոգով ի՞նչ գործ ունէք հասեղ նստած: Ձեզ համար իհարկէ յեղափոխութիւն չի եղել, որովհետեւ որտեղ ձեր քաղաքական բովանդակութիւնը առաջ էր ստեղծուած, հիմա նոյն տեղը ստեղծուած ա: Խօսում էք արտաքին քաղաքականութեան, անկախ քաղաքականութեան, Հայաստանի ինքնութեան մասին, ու ձեր հիմնարկի դէմը տնկում են Հայաստանի, Միացեալ Նահանգների ու Եւրոմիութեան դրօշը, մեզ էլ խորհուրդ էք տալիս, որ պէտք ա արտաքին քաղաքականութիւնը հաւասարակշռել: Պա Ռուսաստանի դրօշը ինչ էք կախել... էլ չեմ ասում վատիկանի դրօշը»:

«Հայաստանի ապագան կախուած է մէկ մարդուց, եւ այդ մէկ մարդը դու ես». տարիներ շարունակ ըրած իր այս յայտարարութիւնը, Փաշինեանի կարծիքով, տակաւին կը մնայ արդիական:

«Հայերը Մեր Երկրին Մէջ Երբեք Ցեղասպանութեան Զեմ Ենթարկուած»

տուած է թրքական լրատուամիջոցի մը հետ գրոյցի ընթացքին: Նախ թուրքիոյ նախագահը Ֆրանսան մեղադրած է 20-րդ դարուն ափրիկեան շարք մը երկիրներու մէջ կոտորածներ իրականացնելու մէջ, իսկ այնուհետեւ՝ Մաքրոնին խորհուրդ տուած է պատմութիւնը աւելի լաւ սերտելու: «Մեր պատմութեան մէջ ցեղասպանութեան դէպք չէ եղած: Այդ այսպէս կոչուած Հայոց ցեղասպանութիւն արտայայտութիւնը

գործածելէն զգուշ եղիր: Նախ ծանօթացիր այդ հարցի պատմութեան: Հայերը մեր երկրին մէջ երբեք չեն ենթարկուած ցեղասպանութեան, իսկ այժմ ալ մեր երկրին մէջ կ'ապրի մօտ 100.000 հայ, որոնց մէկ մասը՝ Թուրքիոյ քաղաքացի: Անոնք մեր երկրին մէջ կ'ապրին եւ պիտի շարունակեն ապրիլ: Մենք կրնայինք Հայաստան ուղարկել այն հայերը, որոնք Թուրքիոյ քաղաքացիներ չեն, բայց այդպէս չենք ըրած», - նշած է էրտողան:

Ատրպեյճանցի Լրագրող Շահին Չաչիեի Յօդուածը Իր Հայաստան Այցի Մասին



Թաւշեայ Յեղափոխութիւնը Արմատականացրել է Հայ Հասարակութիւնը ԼՂ Հակամարտութեան Հարցում

Ատրպեյճանական Turan գործակալութեան խմբագիր Շահին Չաչիեւը, որը վերջերս այցելել է Հայաստան՝ հարցազրոյցների շարք պատրաստելու նպատակով, գրում է, որ «դժուար է գերազանհատել հնարաւորութիւնը ծանօթանալու մի երկրի հասարակական կարծիքի հետ, որի հետ գտնուում ես պատերազմական վիճակում»: Նրա տպաւորութեամբ՝ Հայաստանում տեղի ունեցած Թաւշեայ յեղափոխութիւնը եւ Փաշինեանի թիմի՝ իշխանութեան գալը աւելի շուտ արմատականացրել են հայ հասարակութիւնը դարաբաղեան հակամարտութեան հարցում:

Չաչիեւը պատմում է, որ Պաքուում եւ Երեւանում իշխանութիւն ստանալու վրայ ծախսուել են ամիսներ: Նա շնորհակալութիւն է յայտնում երկու երկրների պաշտօնական կառուցներին ընձեռուած հնարաւորութեան համար՝ առանձնապատուկ երախտիք յայտնելով ՀՀ ԱԳՆ-ին՝ իրեն հաւատարմագրելու համար:

«Այդ քայլը բարձրացրել է Հայաստանում քննադատութեան ու մեղադրանքների մեծ ալիք ու թերեւս երկար չի դադարի: Քիչ չէ քննադատութիւնը նաեւ Ադրբեյջանում, որտեղ այցի բուն փաստը որոշների կողմից ընկալուել է որպէս անձնատուութեան կամ դաւաճանութեան գործողութիւն: Սակայն վերադառնանք լրագրութեանը: Անձամբ ինձ եւ Ադրբեյջանում շատերին նախեւառաջ հետաքրքրում էր մի հարց՝ ինչ է փոխուել Հայաստանում իշխանութեան փոփոխութիւնից յետոյ, ինչպիսի՞ն են մարդկանց տրամադրութիւնները, արդեօք կա՞յ յոյս, որ Փաշինեանի թիմի հետ հնարաւոր կը լինի պայմանաւորուել», - նշում է հեղինակը:

Չաչիեւը հայաստանեան իր շփումների արդիւնքում եկել է մի քանի եզրայանգումների, որոնք հայերի անունից ամփոփել է հետեւեալ կերպով

1. Մենք (հայերս) ձեզ չենք վստահում
2. Դուք պէտք է անէք առաջին քայլը եւ ապացուցէք, որ այլեւս չէք պատերազմելու
3. Ղարաբաղն ու յարակից շրջանները չենք վերադարձնելու, եւ այդ հարցն առհասարակ պէտք է ուղղել ոչ թէ մեզ, այլ Ղարաբաղին
4. Պատերազմից չենք վախենում, եւ դուք ուժով ոչնչի չէք

հասնի
Չաչիեւի տպաւորութեամբ՝ Հայաստանում տեղի ունեցած Թաւշեայ յեղափոխութիւնը եւ Փաշինեանի թիմի՝ իշխանութեան գալը աւելի շուտ արմատականացրել են հայ հասարակութիւնը դարաբաղեան հակամարտութեան հարցում:

«Այդ տրամադրութիւնները կարելի է այսպէս նկարագրել. Սերժ Սարգսեանի ծախս վարչակարգը պատրաստ էր յանձնել Ղարաբաղի շուրջ շրջանները՝ իշխանութիւնը պահելու համար: Սակայն կռոււած պայցուած կառավարութեան տպաւորումից եւ ժողովրդավարութեան հաստատումից յետոյ ժողովուրդն այլեւս թոյլ չի տայ նման բան:

Խանդավառութիւնն այն փաստի առթիւ, որ յաջողուել է տապալել ատեղի վարչակարգը, եւ բոլոր միւս հարցերը հիմա կարելի է լուծել, զգացում է ամէնուրեք:

Փաշինեանը մեծ աջակցութեամբ

Շար.ը էջ 18

Ալիեւ Դարձեալ Ասպարէզ Կը Կարդայ «Մենք Չենք Համակերպուիր Տարածքներու Գրաւման Հետ»



Պաշտօնական Պաքուն կրկին կը պնդէ, որ դարաբաղեան հակամարտութիւնը պէտք է կարգաւորուի բացառապէս Ատրպեյճանի տարածքային ամբողջականութեան շրջանակներէն ներս, եւ որ պիտի ձեռնարկէ հնարաւոր ջանքերը երկրի տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու համար:

Այս մասին յայտարարած է Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւը Real TV-ի հետ զրոյցի ժամանակ:

«Այսօր Ատրպեյճանը առաւելութիւն ունի թէ՛ բանակցային սեղանի շուրջ, թէ՛ մարտի դաշտին մէջ: Միջազգային հեղինակաւոր կառույցներէն շատերը մեր դիրքորոշումը կը պաշտպանեն», - նշած է Ատրպեյճանի ղեկավարը՝ աւելցնելով, թէ «Լեւոնային Ղարաբաղը Ատրպեյճանի անբաժանելի մասն է», եւ Պաքուն երբեք չի համակերպուիր «իր տարածքներու գրաւման» հետ:

Ալիեւը հերթական անգամ համոզմունք յայտնած է, որ աշխարհի մէջ ուժի գործօնը կը դառնայ գերիշխող, «ուժը կը ծնի իրաւունք». - «Մենք պիտի ձեռնարկենք բոլոր հնարաւոր ջանքերը

մեր երկրի տարածքային ամբողջականութիւնը վերականգնելու համար»:

Որոշ պնդումներու համաձայն, վերջին 14 տարուան ընթացքին տեղական լրատուամիջոցին տուած իր առաջին այս հարցազրոյցին մէջ Իլհամ Ալիեւը նաեւ անդրադարձած է Հայաստանի նոր իշխանութիւններու յայտարարութիւններուն, որ Ղարաբաղը պէտք է վերադառնայ բանակցային գործընթաց: Ատրպեյճանի առաջնորդը ըսած է. - «Հայկական կողմի այդ դիրքորոշումը աջակցութիւն չէ ստացած ո՛չ Ատրպեյճանի, ո՛չ ալ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներու կողմէն»:

Փաշինեանը, ի դէպ, Ազգային ժողովի ամպիոնէն դարձեալ անդրադարձած էր դարաբաղեան բանակցային գործընթացին մէջ Արցախի լիարժէք ներգրաւման անհրաժեշտութեան՝ վստահեցուցած էր, որ այն իրականացնելու համար կը տեսնէ «շատ յատակ ձեւեր եւ մեթոտներ»:

Պաքուն, որ շաբաթներ առաջ կը խօսէր դարաբաղեան գործըն-

Շար.ը էջ 18

GYO
SPRING RETREAT
MARCH 29, 2019 TO APRIL 1, 2019

«Կայծ» Երիտասարդական Միութիւնը ուրախ է տեղեկացնելու, որ Հայ-Ամերիկեան Խորհուրդի հետ համագործակցաբար կազմակերպած է պատանեկան գարնանային հաւաք մը, որ տեղի պիտի ունենայ Մարտ 29-էն մինչեւ Ապրիլ 1-ը, 2019:

Սոյն հաւաքը Անվճար է եւ 11-17 տարեկան տղաք եւ աղջիկներ իրաւիրուած են մասնակցելու անոր:

Ինչպէս ձեզմէ շատերուն ծանօթ են, «Կայծը» նուիրուած է հայկական ժառանգութեան պահպանման՝ հայ երիտասարդներու միջեւ յարաբերութիւններու ամրապնդման միջոցով:

Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան հովանիին տակ 1910-ին հիմնուած մեր միութիւնը ունի երկար տարիներու պատմութիւն՝ մեր համայնքի կեանքէն ներս իր ներգրաւուածութեամբ եւ ընկերային ու քաղաքական գործունէութեամբ:

Հաւաքավայրը գտնուելով գեղատեսիլ Կանաչ Լիճի շուրջ (Big Bear Lake-ի մօտ), կը հանդիսանայ լաւագոյն վայրը երիտասարդներու հայեացքները ընդլայնելու համար եւ իրաշալի հնարաւորութիւն կու տայ հայ պատանիներուն՝ ծանօթանալու իրենց ազգային ժառանգութեան, մշակոյթին, պատմութեան, Սփիւռքի եւ Հայաստանի մէջ առկայ հայկական հարցերուն եւ մեր հասարակութեան ներկայ իվիճակին: Լսելով այս նիւթերու մասին, անոնք ձեռք պիտի ձգեն խմբային հմտութիւններ եւ ստեղծեն երկարատեւ բարեկամութիւններ՝ այլ հայ երիտասարդներու հետ:

Պիտի խնդրենք որ, Ձեր գաւակները եւ կամ թոռնիկները արձանագրէք այս հաւաքին, կարելի եղած չափով շուտ, նկատի ունենալով որ տեղերը սահմանափակ են:

Արձանագրութեան եւ կամ յաւելելու տեղեկութիւններու համար կը խնդրուի հեռաձայնել 818-660-5142 թիւին եւ կամ կապուիլ էլեկտրոնային փոստով՝ info@ArmenianCouncil.org:

ՀՀ Գլխավոր Հիւպատոս Արմէն Բայրուրդեան Հանդիպած է Քալիֆորնիայի Նահանգային Սենատի Ղեկավարութեան Հետ



Հոս Անջելեսում ՀՀ գլխավոր հիւպատոս Դոկտ. Արմէն Բայրուրդեանը փետրուարի 14-ին աշխատանքային այցով մեկնել է Քալիֆորնիայի մայրաքաղաք Սակրամենտոյ, որտեղ հանդիպել է Նահանգային Սենատի նախագահ Թօնի Աթկինսի եւ Սենատի Ֆինանսական յատկացումների յանձնաժողովի նախագահ Էնթօնի Փորթմանթինոյի հետ:

Հանդիպման առանցքում եղել է Հայաստանի եւ Քալիֆորնիայի միջեւ գործակցութիւնը բոլոր ուղղութիւններով, ներառեալ՝ տնտեսական, բարձր տեխնոլոգիաների, գիւղատնտեսութեան, զբօսաշրջութեան, կրթութեան ու մշակութային ոլորտներում: Կողմերը քննարկել են Քալիֆորնիայի Նահանգային Սենատում գործող Քալիֆորնիա-Հայաստան-Արցախ առևտրի, արուեստի եւ մշակութային փոխանակումների յատուկ յանձնախմբի նախաձեռնած ծրագրերը: Քննարկուել են Քալիֆորնիայի եւ Հայաստանի բազմաբնոյթ գործնական կապերը խորացնելուն ուղղուած քայլերը, այդ թւում՝ գործարար դաշտում: Սենատոր Փորթմանթինոն նաեւ Քալիֆորնիա-Հայաստան-Արցախ առևտրի, արուեստի եւ մշակութային փոխանակումների յատուկ յանձնախմբի նախագահն է:

ՀՀ գլխավոր հիւպատոսի՝ Քալիֆորնիայի Սենատ այցի առիթով Սենատոր Փորթմանթինոն նոյն օրը ներկայացրել է օրինագիծ, որի համաձայն Հայաստանում պէտք

է հիմնուի Քալիֆորնիայի առևտրի գրասենեակ: Ընթացակարգն անցնելուց եւ օրէնք դառնալուց յետոյ այն հիմք կդառնայ Հայաստանում ստեղծել Քալիֆորնիայի առաջին վերաբացուած առևտրային գրասենեակը ԱՄՆ-ից դուրս: Նահանգային Սենատում կայացած հանդիպումների ընթացքում ՀՀ գլխավոր հիւպատոսը Սենատի նախագահի աջակցութիւնն է խնդրել օրինագծի ընդունման գործում: Նա նաեւ բարձր է գնահատել Քալիֆորնիայի Նահանգային խորհրդարանի դիրքորոշումը Հայաստանի եւ ամերիկահայ համայնքի համար կարեւորագոյն խնդիրներում, ինչպիսիք են Արցախի միջազգային ճանաչումն ու Հայոց ցեղասպանութեան դատապարտումը:

Թօնի Աթկինսը Դեմոկրատական կուսակցութեան ներկայացուցիչ է, 2018թ.-ին ընտրուել է Սենատի նախագահ՝ դառնալով Քալիֆորնիայի Սենատի առաջին կին ղեկավարը:

ՀՀ գլխավոր հիւպատոս Արմէն Բայրուրդեանը փետրուարի 15-ին մասնակցելու է Քալիֆորնիայի Սենատի լիազումար նիստին: Նրան սենատին է ներկայացնելու սենատոր Սթիվ Ուիլքը, որը Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչ է եւ հանդիսանում է սենատի մի քանի յանձնաժողովների փոխնախագահ, մասնաւորապէս՝ Կանոնակարգի, կրթութեան, Գիւղատնտեսութեան եւ Կառավարական մարմինների:

Վիքթոր Համբարձումեանի Անուան Միջազգային Մրցանակ՝ Խուճը մը Գիտնականներու

Գիտութիւններու ազգային ակադեմիային ներս, 13 փետրուարին, տեղի ունեցած է աշխարհահռչակ աստղաֆիզիքոս Վիքթոր Համբարձումեանի անուան միջազգային գիտական մրցանակի յանձնման արարողութիւնը: Այս մասին NEWS.am-ը կը տեղեկանայ ՀՀ ԳԱԱ լրատուական ծառայութենէն:

«Ակադեմիկոս Վիքթոր Համբարձումեանի անուան միջազգային գիտական մրցանակը» կը տրուի աշխարհի յայտնի գիտնականներու աստղաֆիզիկական եւ անոր յարակից բնագիտութեան, ուսողութեան մարզերու մէջ ստացած կարեւորագոյն գիտական արդիւնքներու համար երկու տարին մէկ անգամ: Գիտական մրցանակի մի-

ջազգային յանձնաժողովի նախագահ, ՀՀ Գիտութիւններու ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսեան ներկայացուց, որ մինչ 2018-ի Ապրիլին ստացած են 14 տարբեր առաջարկ-ներկայացում գիտութիւններու ակադեմիաներէ եւ այլ խոշոր գիտական կեդրոններէ:

ները, որոնք ջութակի, թաւ ջութակի եւ դաշնամուրի վրայ ներկայացուցին Մանսուրեանի գլուխգործոցները, իսկ Ն.Ս.Ս.Ս. «ԱՐԲԳ» պարախումբէն պարմանուհիներ ներկայացուցին գոյգ գեղեցիկ պարային կտորներ:

Սրտի խօսքերու ծիրին մէջ, Տիգ. Ազատուհի Գալաճեան, ներկայացնելով Մանսուրեանի կեանքի դրուագները՝ պատմեց, թէ ինչպէս ան անցած էր բազում դժուարութիւններէ, սակայն չէր ընկրկած, այլ միշտ ներկայացուցած էր լաւագոյնը, արժանանալով հայկական եւ համաշխարհային գնահատանքի:

Կազմակերպութեամբ Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութեան, Հինգշաբթի, 14 փետրուարին, Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ ի պատիւ Տիգրան Մանսուրեանին: Հաւաքոյթին ներկայ գտնուեցան հոգեշնորհ Հայր Յովակիմ Աբղ. Բանճարճեան, ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ Ընկ. Ալեքսան Բէօշկէրեան, ՄԴՀԿ Լիբանանի Շրջանի վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Սեպուհ



Գալիաքեան, Պէյրութի քաղաքապետութեան անդամ եւ ՀԿԲՄի ատենապետ Արամ Մալեան, Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութեան անդամները եւ միութեան հիւրերը, որոնք եկած էին վայելելու վաստակաշատ երաժիշտի ընկերակցութիւնը ընթրիքի սեղանի շուրջ:

Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետուհի Անի Եփրեմեան կատարեց ողջոյնի խօսքը, որուն մէջ ան թուեց Տիգրան Մանսուրեանի յատկանիշերը թէ՛ որպէս մեծանուն երաժիշտ, թէ՛ որպէս տիպար հայ մարդ: Ան ընթերցեց հատուածներ Մանսուրեանի մասին շատ մը հայ եւ ոչ-հայ արուեստագէտներէ, որոնք փորձած են բնութագրել մայեսթրօյին մեղեդիները:

Անոնց մէջ միշտ կայ ուրախութեան, լաւատեսութեան, պայծառութեան զգացմունքը: Եփրեմեան նաեւ խօսեցաւ Մանսուրեանի ստեղծագործական հրաշալիքներուն եւ հայ ժողովուրդին ու մարդկութեան անոր մատուցած ծառայութիւններուն մասին:

Գեղարուեստական յայտագրի ծիրին մէջ ելոյթ ունեցան Ալէք. Արէն եւ Աննօ Տօներեան եղբայր-

Տիգ. Մաքրուհի Խաչատուրեան յուզումնախառն ելոյթի մէջ պատմեց, թէ ինչպէս երկար տարիներ շարունակ իրեն ներգրաւած են Մանսուրեանի գործերը, որոնք կը համարուին «աստուածային» երաժշտական աշխատանքներ: Իրենց սրտի խօսքերը փոխանցեցին նաեւ Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի տնօրէն Ընկ. Նազօ Ճէրէճեանը եւ Հայ Աւետարանական Գոլէճի տնօրէն Դոկտ. Արմէն Իւրնէշլեանը:

Մայեսթրօ Տիգրան Մանսուրեան ապա արտասանեց սրտի խօսք մը, որուն մէջ շնորհակալութիւն յայտնեց հաւաքոյթի կազմակերպման եւ իրեն շնորհուած պատուոյն համար: Ան դիտել տուաւ, որ մեծապէս ազդուած է արտասանուած սրտի խօսքերէն եւ մեծ անակնկալով մը որոշեց «Կտոր մը երկիր»-ը իր իսկ մատներով նուագել Սահակեան Գոլէճի դաշնամուրին վրայ:

Հաւաքոյթի աւարտին ներկաները միասնաբար հատեցին Մանսուրեանի 80-ամեակին նուիրուած կարկանդակը, լուսանկարուեցան մեծ երաժիշտին հետ եւ անոր փոխանցեցին իրենց բարեմաղթանքները:

Աթէնքում Տեղի Ունեցաւ Հայ Ժողովրդի Բարեկամ Եօրդոս Սուրիսի Յիշատակին Նուիրուած Յուշ-երեկոյ



Աթէնքում, Յոյն գրողների միութեան սրահում, Յունուարի 15-ին, Յոյն գրողների միութիւնը եւ Հայ-Յունական ուսումնասիրութիւնների կենտրոնը, «Հայաստան» հասարակական մշակութային կենտրոնի համագործակցութեամբ կազմակերպեցին Յուշ-երեկոյ, որը նուիրուած էր հայ ժողովրդի բարեկամ, յոյն անուանի բանաստեղծ,

ղար Յովսէփ Քասեանը ներկայացրեց «Եօրդոս Սուրիսի Ռոմէօս թերթը եւ Հայկական հարցը» գիրքը:

Ասմունքեցին՝ Ազգային թատրոնի դերասան, բանաստեղծ Մարթա Պապադոպուլուն, գրող Կաթերինա Դոգա-կոտոպուլուն, դերասանուհի Նազիկ Աջդինեանը, դերասանուհի Զանոս Դանիասը:

ΣΟΥΡΗΣ 100
(1919-2019)

Με το κλείσιμο ενός αιώνα από το θάνατο του Γεωργίου Σουρή, η Εταιρία Ελληνών Λογοτεχνών και το Κέντρο Ελληνο-Αρμενικών Μελετών διοργανώνουν λογοτεχνική βραδιά αφιερωμένη στο έργο του μεγάλου Έλληνα ποιητή και στις αναφορές του στον αρμενικό λαό και τον αγώνα του. Λεπτομέρειες στο επόμενο φύλλο.

գրող Եօրդոս Սուրիսի մահուան 100-րդ տարելիցին:

Հանդիսութեան ընթացքում տեղի ունեցաւ նաեւ Հայ-Յունական ուսումնասիրութիւնների կենտրոնի կողմից Եօրդոս Սուրիսին նուիրուած՝ («Եօրդոս Սուրիսի Ռոմէօս թերթը եւ Հայկական հարցը») գրքի շնորհահանդէսը:

Ողջոյնի խօսք ասաց Յոյն գրողների միութեան նախկին նախագահ՝ Պավլոս Նաթանաիլը, բանաստեղծին Յունաստանի Ազգային ժողովի գրադարանի բաժնի վարիչ Էլլի Դրուլիան եւ Յոյն գրողների միութեան վարչութեան անդամ Սպիրոս Ավրոնիդիսը:


Հայ-Յունական ուսումնասիրութիւնների կենտրոնի քարտու-

Միջոցառման համակարգողներն էին՝ Հայ-Յունական ուսումնասիրութիւնների կենտրոնի անդամ Լուսի Բերբերեանը եւ Յոյն գրողների միութեան նախագահ Կոստաս Կարուստը:

Յիշեցնենք, որ գրող, բանաստեղծ եւ լրագրող Սուրիսը Աթէնքում 33 տարի հրատարակել է ROMIOS (Յոյնը) շաբաթաթերթը, որտեղ նա հրատարակել է շատ կարեւոր տուեալներ 1895-1896թթ. եւ 1909 թուականների հայերի կոտորածների մասին: Եօրդոս Սուրիսը հինգ անգամ Նոպէլեան մրցանակի թեկնածու է առաջադրուել, այդ թւում՝ 1900թ.-ին Յունաստանի խորհրդարանի կողմից:

«Հայաստան» լրատու ցանց

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 massis2@earthlink.net

 NATIONAL NOTARY ASSOCIATION
 NOTARY PUBLIC

Garine Depoyan

626-755-4773
 554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
 ghdepoyan@gmail.com

Հի՞ն, Թե՞ Նոր Հայեր...

ԴՈՎՏ. ԳՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՍ

Կեղրոնական Եւրոպայի հայկական ներկայութիւնը ունի իւրաքանչիւր թիւններ: Հայկական սփիւռքը այս երկիրներու մէջ կազմաւորուած է միջին դարերէն սկսեալ: Այս իմաստով հայկական իրականութիւնը այս շրջաններուն մէջ եղած է «հին», իսկ «նոր»-ը՝ Յեղասպանութենէ ետք ճողոպրած հայրերին, որոնք հասած են այս շրջանները: Իսկ վերջին տասնամեակներուն ասոնց վրայ կու գան աւելնալու Հայաստանէն ժամանած հայերը: Հայկական սփիւռքի ու գաղութներու կազմութիւնը կեղրոնական Եւրոպայի այս երկիրներու մէջ որակուած է որպէս հին եւ նոր հայեր:

Ան 1969 թուականին մեկնած է Երեւան՝ իր ուսումը շարունակելու համար եւ մասնագիտացած է բեմադրութեան արուեստին մէջ: Վերադարձած է Պուտափեշտ՝ հունգարական հեռատեսիլի եւ ռատիօժամի պատասխանատու տնօրէնի հեղինակաւոր պաշտօնը: «Համայնապար վարչակարգի օրերուն միշտ ալ կը հետապնդուէի», ըսաւ Ալեքս: Իսկ հետապնդումը. Ան ստանձնած էր քաղաքական լուրերու եւ անոր բաժնի սփռումի տեղակալի «զգայուն» պատասխանատուութիւնը:

Ալեքսին տունը եղած է հանդիպումներու վայր: Շատ մը հայ մտաւորականներ եւ գրողներ ու, տակաւին, արուեստագէտներ, որոնք այցելութեամբ գտնուած են Հունգարիա, «անցած» են իր բնակարանէն:



Յունուար 2019, Պուտափեշտ, Հունգարիա: Դարձեալ գեղեցիկ քաղաք մը՝ աշխարհի շատ մը նոյնանման մայրաքաղաքներու մէջ, որոնք կու գան ստեղծելու սքանչացումի հոգեպարար տրամադրութիւն: Պուտափեշտի պարագային, կայ Տանիւկ գետը, որուն երկու կողմերը սփռուած են Պուտա եւ Փեշտ քաղաքները:

Ալեքս Աւանդեանը ծնած է Հունգարիա: Ան, այսպէս ըսած, գաղութի «ներկայացուցիչ» դէմքն է: «Ծնողքս Յեղասպանութենէ ետք հասած են այս երկիրը», ըսաւ Ալեքս: «Հայրս չէր գիտեր, թէ ուր ծնած է. մեծ խումբ մը որբերու հետ հասած է հոս: Իսկ մայրս Կեսարիայէն է: Հունգարիա հասած հայերը առաւելաբար եղած են Կեսարիայէն», ըսաւ ան:

Հին հայերը կորսնցուցած են իրենց ինքնութիւնը եւ լեզուն: «Կը գիտակցին, որ իրենց ընտանիքին մէջ տեղ մը հայկական ինքնութիւն կայ», ըսաւ Ալեքս: Ալեքս լաւ հայերէն կը խօսի:

րանէն: Ալեքսի բնակարանը «հայրենի տուն» է: Ասոր վրայ պիտի աւելցնել, որ ան ամուսնացած է Երեւանէն Կարինէ Կարապետեանին հետ, որուն հայրը՝ Արծուիկը, եղած է «Սովետական Հայաստան» թերթի խմբագիրը:

Հունգարիան ալ անցած է համայնապար կարգավիճակէն դէպի Եւրոպական միութիւն: Եւ այս իմաստով, 1994-1995 տարիներուն ստեղծուեցան եւ վաւերացուեցան տասներեք համայնքային փոքրամասնութիւններ՝ պետական ճանաչումով, ներառեալ հայկականը: Եւ Ալեքս Աւանդեանը եղած է «մղիչ ուժը» այս փոքրամասնութիւնները հիմնելու մէջ:

Ալեքսին կեանքը «դադար» չէ տեսած մինչեւ այսօր: «1998 թուականին հիմը դրինք հայկական ռատիօժամին», ըսաւ ան: «Մեզի շնորհեցին շաբաթական կէս ժամ հաղորդում-յայտագիր, եւ մենք գոհ ենք այս վիճակէն»:

Սօսի Սուսանեանը կու գայ

Հալչպէն: Երեւանի բանասիրական համալսարանէն վկայուելէն ետք վերադարձած է Հալչպէս եւ նուիրուած՝ ուսուցչական ասպարէզին: 2003 թուականին եկած է Պուտափեշտ՝ կազմելու համար հայ ընտանիք մը՝ ամուսնանալով հալչպահայ Յարութիւն Տէտէեանին հետ:

բաղկանան: Այս իմաստով ալ երեւի կորսնցուցած է հայկական դրոշմը. «Մեզի պէտք է հայկական եկեղեցի, որպէսզի գաղութը աւելի լաւ կազմակերպուի եւ համախմբուի», ըսաւ Ալեքս: Բայց Ալեքսին «յուսախաբութիւնը» մղիչ ուժ դարձած է, որ



Սօսին ինք ստանձնած է ռատիօժամի պատասխանատուութիւնը եւ Ալեքսի ղեկավարութեան հետ հայ ձայնը կը սփռէ...

Իսկ Յարութիւնը... Տասնինը տարեկանին ձգած է Հալչպէս եւ մեկնած Երեւան՝ մասնագիտանալով որպէս ատամնաբուժ: Ետքը անցած է Ֆրանսա՝ ուսումը կատարելագործելու համար, որմէ ետք՝ Հունգարիա: Սփիւռքահայ կեանքի մէկ լաւ ու ապրող օրինակը - Մէկ ուստանէն միւսը - Բայց այս բոլորին մէջէն եւ մինչեւ այսօր Յարութիւնը կը փնտռէ Հալչպէս մէջ սորված իր հայու արժէքի կեանքը եւ անոր ջերմութիւնը: «Հոս չկայ այն ջերմութիւնը», ըսաւ ան: Եւ երեւի այդ քանի մը ժամերը, որ միասին եղանք, կարծէք գտաւ այն ջերմութիւնը, որ կը փնտռէր տարիներէ ի վեր եւ չուզեց, որ այդ ժամերը ընդհատուին...

Ու դարձեալ Ալեքսը: Այս անգամ՝ իր մարտահրաւէրներով, որոնց մէջէն կ'երեւին նաեւ իր ապրած յուսախաբութիւնները...

«Գաղութին թիւը հազիւ երեք հազար հոգի կը հաշուէ», ըսաւ ան: «Դժուար կ'ըլլայ հայերը քաջալերել, որպէսզի մասնակցին ազգային կեանքին», շարունակեց ան: Այս անգամ՝ իմ մտորումներս: Բայց արդեօք կա՞յ գաղութ, ուր դիւրին կարելի ըլլայ քաջալերել հայուն խանդավառ եւ մեծ մասնակցութիւնը ազգային կեանքին մէջ...

Պուտափեշտի մէջ կայ հայ կաթողիկէ եկեղեցի, որուն անդամները, այսպէս ըսած, հին հայերէ կը

ան անձնական մտալղացումներով եւ ջանքերով փորձէ հայը, անոր մշակոյթը եւ Յեղասպանութիւնը ծանօթացնել տեղական շրջանակներուն: Եւ մեկնելով իր պատասխանատուութիւններէն, պաշտօններէն ու պետական կապերէն՝ հիմը կըրցած է դնել Հայկական մշակութային հիմնադրամին, որ մէկ կողմէ կը հրատարակէ «Արմէնիա» ամսագիրը՝ հայերէն, բայց նաեւ հայ մշակոյթին, պատմութեան եւ գրականութեան նուիրուած շատ մը հրատարակութիւններ՝ հունգարերէն լեզուով, ծանօթացնելու համար «հայ»-ը տեղական միջավայրին:

Ու տակաւին: Կայ Պուտափեշտի մէջ Հայ մշակոյթի կեդրոնը: Քաղաքի կեդրոնական մասին մէջ, մուտքին՝ եռագոյն ցցուն դրօշակով, կարծես կը մտնես պզտիկ Հայաստան...

Զապէլ էրմոնէ-Մարթայեանը ծնած է Թրանսիլվանիա՝ Ռումանիա, որ այժմ մաս կը կազմէ Հունգարիոյ տարածքին: Հայրը հայ է, իսկ մայրը՝ ռումանացի: «Մեծ ծնողքս քաջալերեցին զիս, որ հայերէն խօսիմ», ըսաւ երիտասարդ Զապէլը, որ ստանձնած է կեդրոնի վարիչի պաշտօնը: Բայց մեծ ծնողքին քաջալերանքը բաւարար չէ եղած: Ան հետեւած է Վենետիկի Միլիթարեաններու հայագիտական դասընթացներուն եւ սորված է հայերէն գրել-կարդալ: Զապէլը արուեստագէտ հայուհին է, որ կը մշակէ սպակիրի վրայ գծազրու-

Շար.ը էջ 19

LIFE INSURANCE INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE LONG TERM CARE MEDICARE DENTAL & VISION DISABILITY




Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

(818) 500 9585
(818) 269 0909

Bedros & Siamanto
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815
MARONIANINSURANCE.COM

Ղարաղաղի Գաւարը



Ղարաղաղի տարածքը 1501-ին երբ ընդգրկուեց Սեֆեաների «Պարսկական թագաւորութիւն» կղզեաշական պետութեան մէջ Հայկական լեռնաշխարհի ներքին Տաւրոսի լեռնային համակարգի Չիմեն, լեռնաշղթայի հարաւային լեռնաբազուկի մաս էր: Այս լեռնաշղթան 35 կմ. երկարութեամբ Սեպուհ լեռնաշղթայի 3030 մ. բարձրութիւն ունեցող Սեպուհ լեռան անուամբ «կոչուել է նաեւ Գոհանամ», որը այդ դարաշրջանում թուրքերը Ղարաղաղ «Սեւ սար» էին անվանում, Թաւրիզի Բէյլարբեկութեան Ղարաղաղի Հաքիմութեան տարածք կոչուեց, եւ անունը այդպէս շարունակուեց մնալ Ղարաղաղ:

Ըստ նախաքրիստոնէական

լեռներից մի խոր կիրճով, որի մէջով հոսում է Արաքսը: Լեռները զանազան ուղղութեամբ, ունեն բազմաթիւ թեւեր՝ կազմելով լեռնադաշտեր եւ խոր ձորեր, եւ Արաքսին չհասած ցածրանալով կազմում են փոքրիկ հարթութիւններ: Այդ լեռներն ունեն հետեւեալ զագաթները Աղաղանի մօտ՝ Սիլիանսար, Միգլիթի մօտ՝ Աղղաշ, եւ Սիւրուղի մօտ՝ Քանթալ անուններով:

Բուսական աշխարհը հարուստ է, սարալանջերը ծածկուած են անտառներով: Այն տեղ ուր անտառները վերջանում են, սկսւում է խոտաւէտ շրջանը:

Արաքսի ափերը բուսականութիւնից աղքատ են, եւ ծածկուած են թփերով, որոնք կոչւում են



չրջանի պատմագիր Ստրաբոնի, ներկայ Ղարաղաղի լեռները կոչուել են Հայկական լեռներ: Սա սպառնացուցում է նրանով, որ յետագայում 14-րդ դարի պարսիկ մատենագիր Համդեղլահ Ղազուխին, Ահարից «ներկայում Պարսկաստանի քաղաքներից է» դէպի Արաքսի հովիտը տանող լեռնանցքը կոչում է Arminijan Դրոյք Հայոց:

Պարսիկները յիշեալ շրջանի լեռնաշղթան Սիւհաքուշ էին կոչում «Սեւ սարեր»- «Տես՝ Երեմեանի Հայաստանը ըստ Աշխարհացոյցի», որը թուրքերէնի թարգմանուեց եւ Ղարաղաղ անունը ծնուեց:

Այս տարածքը մեր պատմութեան մէջ յիշուում է թէ Մեծ Հայքի 11-րդ նահանգի՝ Փայտակարան կազմի մէջ եւ թէ վասպուրականի 26-րդ Պարսպատունիք գաւառի «5500 քառ. քիլոմետր» տարածքի մէջ:

Ղարաղաղը տարածւում է Արաքսի աջ ափին Սիւնեաց նահանգի դիմաց: Հայկական լեռների շղթան ձգւում է Արեւմուտքից Արեւելք, այն բաժանուած է Մեղրիի

ծերք: Ըստ կլիմայի՝ Ղարաղաղը բաժանուած է երկու շրջանի. Արաքսի ափերին ձմեռը մեղմ է, լեռնային մասերում կլիման խիստ է, ցուրտ եւ բքաբեր:

Ժողովրդի գլխաւոր զբաղմունքը երկրագործութիւնն է. Լեռները հարուստ են աղբիւրներով, որոնք կազմում են մեծ ու փոքր գետակներ եւ թափում Արաքսի մէջ. Նշանաւոր են՝ Իրու «Իրի» կամ Դուզալի, Ռըղնունի եւ Քալէյբարի գետակները, որոնք միանում են Արաքսին:

Այս քանով բաւարարուենք Ղարաղաղի մասին թողնելով աւելի ծաւալուն շարունակութիւնը ապագային:

Որքան որ ես տեղեակ եմ, ներկայիս ազատագրուած Արցախի Հաղորդ թարածքը որ գտնուում է Արաքսի ափին ու Պարսկաստանի հետ սահմանակից է, օժտուած է շատ մեղմ կլիմայով ուր լսածիս պէս մի շարք Սիրիա հայեր գէյթունի այգիներ են աճեցնում:

Ներկայացրեց, Արմինէ Կ. Կունդակչեան:

Իմաստուն Ստրեր Կեանքի Պարզութեան Մասին


Եթէ դուք չէք ապրիր այն կեանքով, որ ազատած էք բոլոր անպիտան բաներէն, որմով իրենց կեանքը լեցուցած են շատ մարդիկ, այդ կեանքի մէջ շատ ազատ տեղ կը մնայ կարեւորի համար: Այնտեղ չկան անընդհատ զբաղուածութիւնն ու առաջ ընթացքը, այլ կան մտածողութիւնն ու արուեստը, սիրելի մարդոց հետ շփումները, բնութեան մէջ ժամանակ անցընելը եւ մարմնակրթութիւնը: Ատիկա չի նշանակեր, որ այդ կեանքին մէջ դժուարութիւն ու անկարգութիւններ պիտի չըլլան: Դուք կ'ապրիք աշխարհի վրայ, այլ ոչ անկէ հեռու, ինչպէս վանականները: Դուք ունիք իրեր, սարքեր, եւ դուք պարբերաբար զբաղած էք: Պարզապէս կրճատեցէք այդ ամէնը, որպէսզի կեանքի մէջ տարածութիւն յառաջանայ:

Ի՞նչ կը նշանակէ պարզ կեանքով ապրիլ՝

- Տան ու աշխատավայրի տարածքի մաքրութիւնը կը լանգեցնէ անոր, որ կը մաքրուի նաեւ ձեր գիտակցութիւնը: Այն, ինչ որ ձեզի տեսողականօրէն կը շեղէ, աւելի շատ կը ծանրաբեռնէ ձեզ, քան դուք կը կարծէք:
- Առանց շտապելու խաղաղ առուօտը բաւական արժէքաւոր բան է: Կանուխ արթնցէք, որպէսզի հանգիստ կարգալու ժամանակ ունենաք, որեւէ բան գրէք, մարզանքով զբաղիք:
- Դուք չէք սկսիր պարզ կեանքով ապրիլ, քանի դեռ չէք հրաժարած շատոնց սովորական դարձած որեւէ բանէ:
- Հրաժարիլ բարդ է, բայց կը դիւրանայ, եթէ զայն փորձէք ընել մէկ ամսուան ընթացքին: Որեւէ բանէ հրաժարեցէք մէկ ամսուան ընթացքին ու տեսէք, որ ձեզի համար հաճելի պիտի ըլլայ:
- Գնումներ ընելը հանգստանալ չէ: Անիկա ժամանակի ու

գումարի դատարկ վատնում է:


- Եթէ դուք ձեր կեանքը կը լեցնէք շեղող գործօններով, հաւանական է, որ դուք կը վախնաք գիտնալու, թէ ինչպիսին է կեանքը առանց շարունակ համացանցի մէջ ըլլալու, առանց հասարակական ցանցերու, նորութիւններու, հեռատեսիլի, խաղերու եւ համեղ բաներու:
- Պարզ, ամբողջական, առողջ անունը միայն օգտակար չէ, անիկա նաեւ հաճոյք է:
- Դուք պէտք է ժամանակ յատկացնէք կարեւոր բաներու՝ գաւառներուն, ամուսինին կամ կնոջ հետ ժամանակ անցընելուն, որպէսզի արարէք, ստեղծագործէք, մարզանքով զբաղիք: Մնացած ամէն ինչը յետաձգեցէք, սակայն ատոր համար ժամանակ գտէք:
- Պարզ կեանքի հանդէպ թոյլ տուած ամենասարսափելի մեղքը դուն քու վրադ չափազանց շատ պարտաւորութիւններ վերցնելն է:
- Կան որոշ բաներ, որոնցմով պէտք է զբաղիլ գրեթէ ամէն օր՝ կարդալ, գրել, առողջ անունը ուտել, խաղալ երեխաներու հետ:
- Այն, ինչ որ կը շեղէ մեզ, շատ գայթակղիչ է, սակայն՝ նա եւ շատ կործանարար:
- Մենք կը գերազնահատենք արդիւնաւէտութեան նշանա կուրթիւնը: Կեդրոնացումը, առաջնայնութիւններն ու արդիւնաւէտութիւնը առաւել կարեւոր են, ինչպէս նաեւ սիրելի մարդու հետ զբօսանքը:
- Եթէ դուք չսորվիք առանց որեւէ բանի վրայ շեղելու՝ լուռ, միայնակ նստիլ խաղաղ սենեակի մէջ, դուք չէք կրնար պարզեցնել ձեր կեանքը:
- Ճանապարհորդելով՝ դուք ձեզ աւելի ազատ կը զգաք, ոչ այնքան պարտաւորուած ու ծանրաբեռնուած, աւելի քիչ յոգնած: Ատիկա կը վերաբերի ողջ կեանքին:



The Consulate General of the Republic of Armenia in Los Angeles cordially invites you to:

Community Town Hall with the Chairman of the Committee of Diaspora, Science, Education, Culture, Youth and Sports of the National Assembly of the Republic of Armenia

Honorable Mr. Mkhitar Hayrapetyan



Monday, February 25th
Armenian Society of Los Angeles
7:00 p.m.
177 S Louise St. Glendale, CA

Sponsors: The Armenian Society of Los Angeles & Melkonian Global Overture

Բարեկրթութան Կանոններ, Որոնք Ձեզ Կ'օգնեն Առօրեայ Կեանքի Մեջ Լաւ Դամարում Ունենալու Դամար

Բարեկրթութիւնը ըլլալ կը նշանակէ ունենալ ճիշդ խօսելու կարողութիւն, օգտագործել ճիշդ բառապաշար, գապել յոյգերը, կոկիկ ու մաքուր տեսք ունենալ, դրսեւորել պատրաստ կամութիւն:

1) Եթէ դուք ունէք մէկուն հետ կը զբօսնէք ու ան կը բարեւէ իր ծանօթներուն, դուք նոյնպէս պէտք է ողջունէք, նոյնիսկ եթէ այդ մարդը առաջին անգամ կը տեսնէք:

2) Եթէ դուք այլ մարդուն ներկայ յու թեմք անընդհատ զբաղած էք հեռախօսով, ան կրնայ մտածել, որ ձեզի հա մար ձանձրալի ու ան հետաքրքրական մէկն է: Ձեզ լիովին նուիրեցէք զրուցակիցին:

3) Ակնապիշ մի նայիք մարդոց, մի ծիծաղիք ու ձեր ձայնը մի բարձրացնէք:

4) Եթէ ներողութիւն խնդրած էք եւ ատիկա ընդունուած է, երբեք մի կրկնէք միեւնոյն սխալը:

5) Միշտ շնորհակալութիւն յայտնեցէք ձեզ օգնող մարդոց, որպէսզի ցոյց տաք, որ դուք կը գնահատէք անոնց օգնութիւնը:

6) Կինը երբեք թոյլ պէտք է տայ, որ տղամարդը տանի իր

պայուսակը, իսկ իր վերնագգեստը դէպի հանդերձարան միշտ պէտք է տղամարդը տանի:

7) Մի դատարկախօսէք հեռաձայնով, այլ պատասխանեցէք միայն կարեւոր գանգերուն:

8) Բարեկրթութիւնը տղամարդը հաւասարապէս կը յարգէ բոլոր կիները:

9) Ոչ մէկ պարագայի քննարկեցէք այս 9 թեմաները՝ տարիք, կրօն, խնդիրներ, պատիւ, գործեր, հարստութիւն, հիւանդութիւններ, նուէրներ եւ ընտանեկան անախորժութիւններ:

10) Անկախ տարիքէն, մասնագիտութենէն ու կարգավիճակէն, երբ որեւէ տեղ կը մտնէք, ողջ ունեցէք բոլոր ներկաները:

11) Պահեցէք ձեր կեցուածքը: Կծկուած ուսերը յարգանքի բացակայութիւն կը նշանակեն ուրիշներու հանդէպ:

12) Կանայք պէտք է շարունակ օտար մարդոց ներկայութեան, յատկապէս սեղանի շուրջ: Եւ միշտ յիշեցէք, որ բարեկրթութիւնը բոլոր ժամանակներուն ալ նորաձեւ է:

խուսելու է:

Երբ կը սիրահարիս, պատրաստ ես ժամանակը այդ մարդուն տալու: Պատրաստ ես ձգելու ամէն ինչ ու վազելու անոր մօտ, եթէ ան օգնութեան կարիք ունի: Չէ՞ որ շնորհիւ համատեղ անցուցած ժամանակի կը ստեղծուի այն զգացմունքային կապը, որ կ'ամրացնէ ձեր յարաբերութիւնները: Միտոյ մէջ ներդրած ժամանակի քանակը ուղիղ համեմատական է ձեր յարաբերութիւններու ուժին: Սակայն, եթէ մարդը շարունակ քեզի համար ժամանակ չունի, ատիկա արդէն անհանգստութեան առիթ է:

Եթէ ան քեզի կ'ըսէ, որ չափազանց զբաղած է, կը նշանակէ, որ ան քեզմէ աւելի կարեւոր գործեր ունի: Ատիկա կը նշանակէ, որ առաջնայնութիւններու անոր ցանկին վրայ դու առաջին տեղը չես գրաւեր: Ի հարկէ, պէտք է յարգել գուզընկերոջ անձնական ազատութիւնն ու տարածքը: Բայց յարաբերութիւնները աւելի լաւ պիտի ըլլան, եթէ գուզընկերները իրենց ազատութիւնը օգտագործեն՝ ընտրելով ժամանակը միասին անցընելու տարբերակը:

Յարաբերութիւնները շատ ժամանակ, ջանքեր ու նուիրումով կը պահանջեն երկուքէն ալ: Այնպէս որ, եթէ կը զգաս, որ քեզի համար քիչ է այն ժամանակը, գորգուզընկերդ կը տրամադրէ քեզի, մի վախնար անոր ըսելու այդ մասին: Մի վախնար աւելի շատ ժամանակ եւ ուշադրութիւն պահանջելու: Մի վախնար խնդրելու, որ քեզ դարձնէ իր կեանքի գլխաւոր մարդը:

Եթէ Այս Նշանները Կը Նկատէք Ձեր Ընկերուհիին Մօտ, Ուրեմն Ան Չափազանց Ընշուած Կիճակի Մէջ Է

Ծանօթ իրավիճակ՝ մօտիկ ընկերուհիի հետ ականջայտ որեւէ բան տեղի կ'ունենայ: Հաւանաբար պարզապէս գերյոգնածութեան արդիւնք է: Սակայն, եթէ ան յաճախ այդպիսի տրամադրութեամբ է, ամէն ինչ կրնայ աւելի լուրջ ըլլալ, քան կը կարծէք:

- Երբ ընկերուհին կը վրդովի ամէն առիթով: Մարդոց մեծ մասնութիւնը կը կարծէ, թէ ճշտախտը կ'արտայայտուի ամէն ինչ ընկողմող տրուութեամբ: Սակայն հակառակը, ճշտախտի ժամանակ մարդիկ կը զգան զայրոյթ եւ վրդովմունք:

- Կը բողոքէ քունի խախտումէ: Մէկ-երկու անքուն գիշեր տապալակ պատճառ է: Իսկ մշտական անքնութիւնը անհանգստացնող նշան է: Կը պատահի եւ հակառակը՝ դժուար է առաւօտեան արթննալ, մշտապէս քնանալ կ'ուզէ:

- Ցաւերը սկսած են տանջել զինք: Գոյութիւն ունի հզօր կապ մարմնի եւ գիտակցութեան միջեւ: Երբ մարմինը կը փորձէ վերականգնել հոգեկան առողջութիւնը, կրնան ի յայտ գալ անհասկնալի ցաւեր մէջ քին եւ մկաններուն մէջ, կրնայ մշտապէս զլխացաւ ըլլալ:

- Առողջութիւնը նուազած է: Մշտապէս յոգնած վիճակ, որ քիչ քանակաբար կամ աշխատանքի մէջ շատ գործ ունենալու հետեանք կը համարենք: Վառ նշաններէն է այն, որ մանր խնդիրները սկսած են յոգնեցնել կամ աւելի շատ ժամա-

նակ կը խլեն, քան՝ առաջ:

- Մեղքի զգացումը կը հետապնդէ զինք: Մշտապէս մեղաւոր զգալը եւ ամէն ինչի մէջ մեղադրել անպիտան ըլլալը, ճիշդ է: Եթէ իւրաքանչիւր իրադարձութիւն կտրուկ ինքնաքննադատութիւն կ'առաջացնէ, ատիկա ճշտախտի նշան է:

- Խենթութիւններ: Ոչ-բնական հետաքրքրութիւնը մոլեխադերով, չափազանցուած սեռային ազատութիւնը եւ այլ չարաշահումները իրականութեան մէջ կրնան ներքին քառսէն ազատելու փորձեր ըլլալ: Այդպիսի փոփոխութիւնը ոչ միայն կարճ ժամկէտ թեթեւութեան կը տանի, այլ նաեւ կը ծանրացնէ ճշտախտը եւ կ'երկարացնէ զայն:

- Խնդիրներ ծագած են ուշադրութեան հետ: Ամէն ինչ կը թուի մշուշի մէջ. կը կորսուին բանալիները, փաստաթուղթերը, կը մոռցուին կարեւոր բաները: Չգալի-օրէն պակաս է աշխատունակութիւնը եւ դժուար է կեդրոնանալ ընթացիկ խնդիրներու վրայ: Վատ տրամադրութեան պատճառով ուշադրութիւնը նոյնպէս կրնայ նուազիլ, սակայն ճշտախտը նոյնպէս ունի այդ պիտի նշան: Յիշեցէք, որ քան շատ նշան նկատած էք, այդքան մեծ է հաւանականութիւնը, որ ձեր ընկերուհիին պարագան ո'չ թէ գերյոգնածութիւն է, այլ՝ ճշտախտ: Անուշադրութեան մի մատնէք, հնարաւորութիւն գտէք օգնելու:

Չացէ Ձամբիւղներ՝ Սուկնով Լեցուած

Բաղադրիչներ. Անհրաժեշտ է կէս քիլօ սունկ, մանր լոլիկ զարդարանքի համար, մէկ սոխ, 100 կրամ պանիր, քիչ մը ձէթ, մայրնէզ, հացէ զամբիւղներ՝ խառնուրդը մէջը լեցնելու համար:

Պատրաստութիւն. Սոխը կտրուի մանր: Սունկերը մաքրել, կտրուի բարակ: Պանիրը քերիչով մանրել: Մանր լոլիկները կիսել: Բուսական իւղի մէջ թմրեցնել սոխը, աւելցնել սունկը, շոգեխաշել

մինչեւ ջուրը գոլորշիանայ: Առանձին խառնել պանիրը, մայրնէզն ու աղը, աւելցնել արդէն պաղած սունկին ու սոխին, լաւ խառնել ու լեցնել հացէ զամբիւղներուն մէջ: Ձարդարել լոլիկի կէսերով ու որեւէ այլ կանաչեղէնով: Այս համեղ զամբիւղներով կարելի է գեղեցկացնել նոյնիսկ ամանորեան սեղանը:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.



SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P.O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

Ատրպէյճանցի Լրագրող Շահին Յաջիել

Շարունակուած էջ 6-էն

Թիւն է վայելում՝ չնայած նրան, որ ոչ ոք այդպէս էլ չձեռնարկեց նրաներ քաղաքական եւ արտաքին քաղաքական մարտավարութիւնն ու ռազմավարութիւնը: Բոլոր զնահատակները յանգում էին նրան, որ կառավարութիւնը պատրաստուած է տնտեսական ճեղքման, ազգային շահերի պաշտպանութեան եւ արտաքին քաղաքականութեան ոլորտում ժառանգականութեան պահպանման ծրագիր:

Հակամարտութեան հարցում նոր կառավարութեան մտեցումն առաջիկայ արտացոլուած է դարաբաղակներին հետ ուղիղ խօսելու առաջարկում», - գրում է Turan-ի խմբագիրը: Նա ընդգծում է, որ իր գրուցակիցները՝ քաղաքական գործիչներ եւ փորձագէտներ, միակարծիք են հարցում, որ առաջին քայլերը պէտք է Պաքուն անի:

«Ինչ է խանգարում Երեւանին անել իր ժեստը կամ քայլը» հարցադրումը, ըստ Հաջիելի, յարուցել է իր գրուցակիցների զարմանքը: Պատասխանն էլ հետեւեալն էր.

էր. «Ինչի մասին խօսել 2016-ի Ապրիլից յետոյ, երբ Ադրբեջանը պետական մակարդակով արգելում է քաղաքացիական հասարակութիւնների շփումը, սրում է հաստեացում թիւնը»:

Ամփոփելով՝ ադրբեջանական կայքի խմբագիրը գրում է, որ դժուար է պնդել, թէ ներկայիս իրադրութիւնը բարենպաստ է կարգաւորման ուղիներ փնտռելու առումով:

Կանխելով հնարաւոր այն հարցադրումները, թէ ինչի համար էր պէտք զնալ Հայաստան, երբ առանց այն էլ ամէն ինչ պարզ է, Turan-ի խմբագիրը նկատում է, որ «չփնտրելով գործընթացը պէտք է մի օր սկսել, եւ դրանում հսկայական է քաղաքացիական հասարակութեան դերը»:

«Շփումների եւ հաղորդակցութեան կարիք կայ անգամ պատերազմի ժամանակ: Երկու երկրների առաջին դէմքերի վերջին հանդիպումները դրա վկայութիւնն են», - եզրափակում է Շահին Հաջիելը:

«Սիւրիւնէթ»

Ալիել Դարձեալ Ասպարէզ կը Կարդայ

Շարունակուած էջ 6-էն

Թացի մէջ մեծ տեղաշարժերու յոյսերու մասին, կոշտ արձագանգած է Հայաստանի ղեկավարի յայտարարութիւններուն: Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը ի պատասխան կոչ ըրած է «չսրել իրավիճակը եւ նախադրեալներ ստեղծել խաղաղ գործընթացի համար»:

«Մէկ կողմէն Փաշինեանը կը յայտարարէ խաղաղ պայմաններ ստեղծելու կարեւորութեան մասին, միւս կողմէն՝ կը փորձէ փոխել բանակցային ձեւաչափը, կը փորձէ մեղադրել Ատրպէյճանը «յարձա-

կողական հռետորաբանութեան մէջ, իբրեւ թէ Պաքուն իր բնակչութեան կը նախապատրաստէ պատերազմի, ոչ թէ խաղաղութեան», - յայտարարած է Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Լեյլա Ապտուլաեւան:

Ատրպէյճանի նախագահի աշխատակազմէն արձագանգած են նաեւ տնտեսական յեղափոխութեան մասին Փաշինեանի յայտարարութիւններուն, պնդելով, որ Հայաստանի մէջ որեւէ տնտեսական առաջընթաց չի կրնար ըլլալ, քանի դեռ հակամարտութիւնը կը մնայ չկարգաւորուած:

Մեծանուն Արուեստագէտ՝ Սարգի Սուրաւեան

Շարունակուած էջ 8-էն

Քաջալերանքը:

1970-ականներէն ի վեր Հայաստանէն արտագաղթը սկսելով, բազմաթիւ հայրենի երգիչներ Լոս Անճելոս հաստատուեցան: Անոնք եւս հայրենի երգերու համն ու հոտը բերելով, ներկայիս մեր գաղութը կը վիտայ հայկական շէն ու շէնշող երգերով, որոնք մայր հայրենիքին երգն ու բոլոր կը բերեն մեզի:

Սարգի Սուրաւեանի այս երգարանը և հոն դրուած երգերը

դասական երգեր են, որքան ժամանակը անցնի, աւելի պիտի արժէքաւորուին ու երգուին մեր ժողովուրդին կողմէ, որուն համար սրտանց կը շնորհաւորենք մեր թանկագին բարեկամը՝ Սարգի Սուրաւեանը, մաղթելով իրեն քաջաւոյժ, արեւշատ օրեր և ստեղծագործական նորանոր յաջողութիւններ:

Հայ ժողովուրդը սիրով հրաւիրուած է իր յարգանքի տուրքը տալու այս թանկագին արուեստագէտին և վայելելու այդ երեկոն, որուն մուտքը ազատ և անվճար է:

Զմիւռնիան 1922-ին

Շարունակուած էջ 8-էն

պատոս Ազիրա Շիպան, Յունաստանի ընդհ. հիւպատոսուհի էլ-զինիա Պէնիաթօլլու եւ Հայաստանի ընդհանուր հիւպատոսի աւագ խորհրդական վարազատ Պահլաւունի: Օրուան գլխաւոր բանախօսն էր Թոքիոյի համալսարանի Պատմութեան բաժանմունքէն դոկտ. Նանաթօ Մուրաթա Սափաճնակի: Բոլոր խօսք առնողներն ալ դատապարտեցին քսաներորդ դարու առաջին եւ երկրորդ տասնամեակներու Զմիւռնիոյ «Ներկայիս Իզմիր» քաղաքին մէջ տեղի ունեցած զանգուածային ջարդերը, հրդեհները, կողոպուտներն ու բռնաբարումները, որոնց զոհ գացին տասնեակ հազարաւոր հայեր եւ յոյներ եւ որոնցմէ շատեր բռնի ծովամուկեղան նշաւակ դառնալով անմարդկային արարքներու:

Յարգելի բանախօսուհին առանձնապէս անդրադարձաւ գաղթականները փոխադրող ազատարար նաւերու շարքին ճաբոնական նաւու մարդասիրական օգնութեան մասին, որով աւելի քան 850 աղէտեալներ փոխադրած էր դէպի խաղաղ նաւահանգիստներ:

Հետաքրքրական միջոցառում մըն էր արդարեւ, որուն շատ սակաւաթիւ հայեր ներկայ էին, մեծամասնութեամբ ճաբոնցիներ եւ յոյներ:

Mark Your Calender

March 24 – Book presentation by Adrienne G. Alexanian, editor of her father’s memoir "Forced into Genocide: Memoirs of an Armenian Soldier in the Ottoman Turkish Army"

Sunday – 2:30 p.m. Museum of Tolerance
Co-sponsored by AGBU, AIWA, NAASR, AAA
9786 Pico Blvd. Los Angeles, CA. 90035
- RSVP (310) 772-2505
Book sale/signing will follow presentation
– proceeds will be donated

March 28 – Book presentation by Adrienne G. Alexanian, editor of her father’s memoir "Forced into Genocide: Memoirs of an Armenian Soldier in the Ottoman Turkish Army"

Thursday – 7:00 p.m. Glendale Downtown Central Library
* With support from the ANCA
222 East Harvard Street Glendale, CA. 91205
- RSVP (818) 548- 2021
Book sale/signing before and after the presentation
– proceeds will be donated



Legacy Realty
Nick Karasarkisian
 Broker - CalBRE # 01022153
 2275 Huntington Dr., #117
 San Marino, CA 91108
 Phone: 213.706.9990
 e-mail: nickkarasarkisian@gmail.com
 www.legacyrealtyca.com




ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
 Փաստիճանայի լաւ շրջանի մէջ վարձու տուն 3 սենեակ եւ 2 բաղնիք ամէն ինչ ներառեալ: No section 8: Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ ճօին (626)578-9200

HOUSE FOR RENT
 3 bedroom 2 bath in Pasadena nice neighborhood© Everything included© No section 8
 Ask Joe (626)578-9200

www.massispost.com
 Daily News Updates

VA Print Media
 Book Printing • Hard Covers • Year Books
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան և Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
 1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
 Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
 vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՀՈԳԵՐԱՆԳԻՍ



ՓԱՅԼԱԿ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Հանգուցեալ Փայլակ Ահարոնեանի մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 24 Փետրուար 2019-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ (2215 E. Colorado Blvd., Pasadena), յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝

Որդին եւ տիկինը՝ Արա եւ Տիանա Ահարոնեան
Ռուստրը եւ ամուսինը՝ Արփի եւ Շահէ Կանիմեան
Թոռնիկը՝ Թամար Կանիմեան
Թոռնիկը եւ ամուսինը՝ Ռիթա եւ Անտրէ Սարուխանեան եւ զաւակունք

Թոռնիկը եւ տիկինը՝ Զոհրապ եւ Գարինէ Կանիմեան
Թոռնիկը՝ Տոքթ. Շիրազ Կանիմեան
Թոռնիկը՝ Ալեքս Ահարոնեան
եւ համայն Ահարոնեան, Յովսէփեան, Պիլեմճեան, Քէշիշեան, Կանիմեան, Տեփանեան, Տարեան եւ Սարուխանեան ընտանիքներն ու հարազատները:

Հոգեհանգստէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Ալթատինայի Պէշկէօթիւրեան կեդրոնի սրահին մէջ՝ 1901 N. Allen Ave., Altadena:

ՅԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

ՍԱՐԳԻՍ ԴԵՐՁԱԿԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժել Գազէգեան իրենց խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն:
Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

Հ.Բ.Ը.Մ.ի 90-րդ Ընդհանուր Ժողովը

Շարունակուած էջ 14-էն

Թացած է փաստաբանութենէ նախարարի եւ Խորհրդարանականէ Քաղաքապետի պաշտօններով, հասնելով աժմու Հօ տը ժէնէրալ Գառնարի-ի պաշտօնին: Տէվէճեանի փալուն գործընթացը յատկանշուած է որպէս յայտնի փաստաբան, իր հանրային ծառայութեան 35 տարիներու ընթացքին մարդկային իրաւանց պաշտպանութեան աննկուն ախոյանի դերով: Իր դրուատանքի խօսքին մէջ, Նախագահ Պերճ Սեդրակեան նշեց, թէ «Հայու զաւակ, որ ինք եւս Յեղասպանութենէն վերապրած է, Փաթրիք Տէվէճեան իր հանրային ծառայութեան մէջ ստեղծած փայլուն ասպարէզի ընթացքին, բնաւ չէ թերացած ձայն չունեցողներու պաշտպանը ըլլալու իր կոչումին մէջ: Իր գործը յարգանքի գերագոյն տուրքը կը հանդիսանայ Հայկական Յեղասպանութեան զոհերու, ինչպէս նաեւ հակական դատի ազատամարտիկներու աւանդին:» Արդարութեան եւ Յեղասպանութեան ճանաչումին ի խնդիր Տէվէճեանի հետեւողական եւ յամառ աշխատանքին իբր արդիւնք, իրականացաւ ֆրանսական Հորթթաթի օրէնքին 2016-ի յաւելուածը, որ մարդկութեան դէմ ոճիրներու, ցեղասպանութեան եւ պատերազմական ոճիրներու նկատմամբ ուրացման կամ արհամարհանքի որեւէ կեցողութեան, կը նկատէ պատժելի ոճիրային արարք: Որպէս հայ աշխարհաքաղաքացի իր օրինակելի գործունէութեամբ, Փաթրիք Տէվէճեան ճամբայ կը հարթէ

ղեկավարներու երիտասարդ սերունդին համար: Միութեան մասնաճիւղերուն եւ ծրագիրներուն մատուցած իրենց երկարամեայ եւ նուիրեալ ծառայութեան եւ ցուցաբերած միութենական բարձր ոգիին համար գնահատանքի արժանացան նաեւ շարք մը պատասխանատու անդամներ եւ պաշտօնեաներ: Թամար Խաչատրեան Սուրբիային, Մոնիքա Նալպանտեան Պրագիլին, Մարալ Զօրպաճեան Աւստրալիային, Հերմինէ Տիւզեան Ֆրանսային եւ Ռուբէն Կէտիքեան Արժանթինին: Թամար Խաչատրեան, որպէս Հ.Բ.Ը.Մ.ի Շրջանակային Յանձնաժողովի Հալէպի կեդրոնի գլխավոր քարտուղարուհի, միշտ պատնէշի վրայ գտնուած էր, Սուրիոյ պատերազմի ամբողջ տեւողութեան, մասնակցելով Հ.Բ.Ը.Մ.ի կեդրոնէն ներս առաջ տարուած անդաբաշխումի, բժշկական եւ ընկերային ծառայութիւններու եւ մշակութային գործունէութիւններու աշխատանքներուն, նաեւ որպէս Շրջանակային Յանձնաժողովի «Հայեացք» պաշտօնաթերթի խմբագրական կազմի անդամ, ապահովելով թերթի կանոնաւոր հրատարակումը, Միութեան Սուրիոյ բոլոր մասնաճիւղերու գործունէութեան մասին մանրամասն տեղեկութիւններով: Պրագիլի Սան Փաօլոյի վարչութեան անդամ եւ երկար տարիներու անխնայ ծառայող Մոնիքա Նալպանտեան՝ որպէս տեղական բոլոր յանձնախումբերու եւ ծրագիրներու համագործակար տարիներ նաեւ ղեկավարած

ըլլալով տեղական համայնքին ծանօթ «Հայկական Խորհանոց»ի աշխատանքները, որուն հասոյթը կը տրամադրուի բարեսիրական նպատակներու: Մարալ Զօրպաճեան 2003-էն ի վեր նախաձեռնող եւ խանդավառող միութենական առաջնորդ մը եղած է Մեյլպուրնի մէջ, ուր ի ճիգերով իրականացած է արդիական կեդրոնի մը կառուցումը: Հերմինէ Տիւզեան, աւելի քան 30 տարիներու իր ծառայութեան ընթացքին, ճիգ չէ խնայեալ պատանիներու մօտ ազգային ինքնագիտակցութիւն մշակելու ուղղութեամբ, մասնաւորաբար Ֆրանսայի մէջ ամառնային ճամբարներ եւ Հայաստանի մէջ ընկերային ծառայութեան եւ հայրենի բնաշխարհի ծանօթանացման պատանեկան արշաւներ կազմակերպելով: Ռուբէն Կէտիքեան, որպէս Արժանթինի մասնաճիւղի Ատենայետ, կը ղեկավարէ Պուէնոս Այրէսի կեդրոնին միջոցաւ իրականացող կրթական, մշակութային, ընկերային, մարզական, սկառտական եւ համայնքային աշխոյժ գործունէութիւնները, որոնց շարքին անոնք կը սատարեն նաեւ Հայաստանի եւ Արժանթինի միջեւ պետական մակարդակով յարաբերութիւններու եւ փորձագիտական փոխանակումներու նախաձեռնութիւններուն: Յատկանշական է մասնաւորաբար Կեդրոնէն ներս կազմակերպուած հայկական ճաշատեսակներու իր որակով ճանաչում ստացած Ուրբաթ եւ Շաբաթ երեկոներու ճաշարանը, որու հասոյթով Հ.Բ.Ը.Մ.ի Մարի Մանուկեան Երկրորդական Վարժարնի շուրջ 900 շրջանակարտներ մասնակցած են Հայաստան կատարուած տարեկան այցելութիւններուն: Ընդհանուր ժողովի ընթացքին գնահատուեցան նաեւ տարբեր շրջանակներու եւ յանձնախումբերու նշանակելի նախաձեռնութիւնները, որոնց շարքին Նիւ Եորք եւ Շրջակայքի եւ Հիսթալին Քալիֆօրնիոյ Երիտասարդ Արհեստավարներու ընկերակցութիւնները: Անոնց աւելի քան երկու տասնամեակներու աշխոյժ գործունէութիւնը, իրենց ընկերային ձեռնարկներու յատուկ պերճութեամբ

եւ այժմէական նիւթերու վերաբերեալ կազմակերպուած շահեկան քննարկումներով, երիտասարդական լայն շրջանակներուն մօտ մեծ ժողովրդականութիւն շահած են, ըլլալով նաեւ դրամահաւաքի կարեւոր միջոցառումներ, որոնք կը սատարեն բարեսիրական թէ կրթական տարբեր ծրագիրներու, ափիւռքի եւ հայրենիքի մէջ: Նկատի ունենալով այն արդիւնաւոր գործունէութիւնները որոնք կարելի եղած են իրականացնել Երիտասարդ Արհեստավարներու նախաձեռնութեամբ, շարժումը գնահատուեցաւ որպէս երիտասարդ սերունդի յանձնառութեան եւ աշխարհատարած կշիռի արդիւնաւոր դրսեւորում, զայն պաշտօնապէս ճանաչելով որպէս Հ.Բ.Ը.Մ.ի թեման մնայուն մարմին, Մրագիր Կանոնագրին մէջ համապատասխան յաւելումով: Նախագահ Պերճ Սեդրակեան վերոնշեալ գործունէութիւններու գնահատումին առընթեր, կոչ ուղղեց ներկաներուն, իրենց հայեացքը ուղղել ապագային. «Մենք կոչուած ենք գործելու նոր եւ ցարդ չբարոյսագրուած ուղղութիւններով, ինչ որ մեզմէ կը պահանջէ ձկունութիւն, ուշիմութիւն, տեսիլք եւ ամենակարեւորը՝ միասնականութիւն...Այստեղ, մենք կարող ենք լաւագոյնը մատակարարելու: Անհրաժեշտ է որ մենք կարենանք առիթներ ընձեռել, աճման նպաստող միջոցներ ստեղծել, նաեւ միջոցներ ապահովել, ներգրաւելու եւ գործի մղելու համայն հայութիւնը աշխարհի տարածքին, հասնելով նոր սերունդին եւ գոհացնելով անոր հետաքրքրութիւնները:» 90-րդ Ընդհանուր Ժողովի աւարտին, պատգամաւորները մեկնեցան Լէ Ժարտէն տը Սէն Տօմինիք սրահէն համոզուած, որ Հ.Բ.Ը.Մ.ը իր համայնքերուն հետ զարգացման հոլովոյթ կ'ապրի, ընդգրկելով նոր յառաջընթաց եւ ինքնութեան լայն սահմանում, միշտ հաւատարիմ դարաւոր աւանդութեամբ իմաստաւորուած Միութեան առաքելութեան, որուն նպատակն է աշխարհատարած հայութեան հզորացումը:

Հի՞ն, Թե՞ Նոր Հայեր...

Շարունակուած էջ 15-էն

թիւն եւ մանրանկարչութիւն: «Օտարներուն եւ հունգարացիներուն կը փորձենք հայ մշակոյթը բացատրել եւ ներկայացնել», ըսաւ Զապէլ: Զապէլը ապրող վկայութիւն մըն է այն ճշմարտութեան, որ՝ «Ուր կամք կայ, հոն կայ ելք»: Եւ եթէ ուզես, կրնաս սորվիլ քու մայրենիդ եւ ծանօթացնել քու ինքնութիւնդ շրջապատիդ: Եւ դարձեալ Սօսին՝ «Երագային Հալէպի» աղջիկը, որուն մէջ գորաւոր կերպով դարբնուած է մայրենին եւ ազգային ինքնութեան գիտակցութիւնը: Սօսին համար հայը արժէք է, որ կարելի չէ սակարկել. Բայց կը գիտակցի նաեւ, որ այս ափերուն մէջ հայ զաւակ մեծցնելը բաւական դժուար առաքելութիւն է: Սօսին եւ Յարութիւնը ունին տասնհինգ տարեկան պատանի զաւակ մը՝ Նարեկ: Հունգարիա ծնած Նարեկը ունի շատ մը հարցումներ: «Բոլոր ընկերներս հունգարերէն կը խօսին, ես ինչո՞ւ հայերէն պիտի խօսիմ», ու տակաւին՝ «Ես հայ եմ, թէ՞ հունգարացի»: Սօսին պահ մը փորձեց իր

արցունքները »խեղդել» մեր խօսակցութեանը ընթացքին: Բայց շարունակեց՝ ըսելով. «Ես արաբերէն սորվեցայ, հիմա տղաս հունգարերէն կը սորվի: Բայց ե՞րբ հայերէն պիտի սորվիմք...»: Նայելով Սօսին եւ իր աչքերուն՝ կրցայ տեսնել հայու արմատները, որուն հիմքերը շատ խորունկ էին: Սօսին չէ յուսահատած Նարեկին հայերէն սորվեցնելէ. Եւ ան երթը կը շարունակէ... Ալեքսը եւ Կարինէն ունին երկու երիտասարդ դուստրեր, որոնք լաւ հայերէն կը խօսին: Անոնք այսօր ամուսնացած եւ կազմած են իրենց ընտանիքները: Կարինէն ինքնավստահ եւ հաստատ է. «Ես իմ զաւակներուս հայերէն սորվեցուցի: Հիմա իրենց կարգն է սորվեցնելու հայերէնը իրենց երեխաներուն»: Հի՞ն, թէ՞ նոր հայեր- Հունգարիա, թէ՞ այլ... Հայը իր ափիւռքահայ գոյապայքարին մէջ ունի կարեւոր առաքելութիւն եւ երեւի պարտականութիւն... Հայերէն սորվեցնել: Ես, դուն եւ բոլորս: Հին, թէ՞ նոր հայեր: Հայերէն սորվիլ եւ սորվեցնել: Հայութեամբ մեծնալ ու մեծցնել:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՉԼ. «Ռեալ»-ը Յաղթեց «Այաքս»-ին, «Տոտենհեմ»-ը Ջախջախիչ Յաղթանակ Տօնեց

Գոռ Մինասյանը՝ Ախոյեան, Սիմոն Մարտիրոսեանը՝ 3-րդ Մրցանակակիր



Ախոյեանների լիգայի փլեյ-օֆֆ փուլի առաջին հանդիպման շրջանակում Մադրիդի «Ռեալ»-ը 2:1 հաշվով պարտութեան մատնեց «Այաքս»-ին:

Խաղի հաշիւը 60-րդ րոպէին բացել է Բենգեման: 75-րդ րոպէին պատասխան գնդակը խփել է Զիեչը: 87-րդ րոպէին յաղթական կոլի հեղինակ դարձաւ Ասենսիոն:

Զուգահեռ խաղում «Տոտենհեմ»-ը 3 անպատասխան գնդակ ուղարկեց Դորտմունդի «Բորուսիա»-ի դարպասը:

Ախոյեանների լիգայի փլեյ-օֆֆ փուլի առաջին հանդիպման շրջանակում ՊՍԺ-ն հիւրընկալուելիս 2 անպատասխան գնդակ ուղարկեց «Մանչեսթեր Յունայթեդ»-ի դարպասը:

Առաջին խաղակէստում կոլեր չգրանցուեցին: Երկրորդ կէսում ֆրանսական թիմը բաւականին լաւ մեկնարկեց: 53-րդ րոպէին հաշիւը բացեց պաշտպան Կիմպեմպեն: 7 րոպէ անց փարիզցիների առաւելութիւնը կրկնապատկեց Մբայեն:

Խաղավերջում երկրորդ զգուշացումից յետոյ խաղադաշտից հեռացուեց մանկունիացիների կիսապաշտպան Պոլ Պոզբան:

Զուգահեռ խաղում «Ռոմա»-ն սեփական չարկի ներքոյ փոքր-ինչ դժուարութեամբ 2:1 հաշվով առաւելութեան հասաւ «Պորտու»-ի նկատմամբ:

Իտալական գրանդից դուբլի հեղինակ դարձաւ Նիկոլո Զանիոլոն: Պորտուգալական թիմից միակ կոլը խփեց Աբրիանը:

«Արսենալը» Պարտուեց ԲԱՏԵ-ին, Զենրիխ Միխարեանը Մասնակցեց Ողջ Խաղին

Ֆուտպոլի Եւրոպայի լիգայի 1/16 եզրափակիչ փուլի առաջին խաղում Լոնտոնի «Արսենալը» հիւրընկալուելիս պարտուեց Բելառուսի ախոյեան ԲԱՏԵ-ին:



Հանդիպման միակ կոլը 45-րդ րոպէին խփեց տանտէրերի կիսապաշտպան Ստանիսլաւ Դրագունը: Հիւրերը խաղն աւարտեցին 10 ֆուտպոլիստով, քանի որ 85-րդ րոպէին կարմիր քարտով հեռացուեց ֆրանսացի յարձակուող Ալեքսանդր Լյակազեարը:

«Արսենալում» հանդէս եկող Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Միխարեանը մասնակցեց ողջ խաղին:

Թիմերի պատասխան հանդիպումը կը կայանայ Փետրուարի 21-ին, Լոնտոնում:

«ժիրոնա»-ն Կանային Յաղթանակ Տօնեց «Ռեալ»-ի Նկատմամբ

Սպանիայի առաջնութեան 24-րդ տուրում Մատրիդի «Ռեալ»-ը «Սանտիագո Բեռնաբեո»-ում 1:2 հաշվով անակնկալ պարտութիւն կրեց «ժիրոնա»-ից:

Առաջին խաղակէստում մագրիդցիների առաջ է մղել Կազեմիրոն: 65-րդ րոպէին 11-մեթրանոցից պատասխան գնդակը խփել է Ստուանին: 10 րոպէ անց կատալոնացիների կազմում յաղթական կոլի հեղինակ է դարձել Պորտուգեարը:

Յաւելեմք, որ խաղավերջում երկրորդ զգուշացումից յետոյ «Ռեալ»-ի կազմում կարմիր քարտ ստացաւ Սերխիո Ռամոսը:

Այսպիսով, այս պարտութիւնից յետոյ «արքայական ակումբ»-ը 45 միաւորով մնում է 3-րդ հորիզոնականում:

Երեւանում աւարտուել է ծանրամարտի տղամարդկանց Հայաստանի 2019 թ. առաջնութիւնը: Մրցումային վերջին օրը մրցահարթակ դուրս եկան 109 եւ +109 քաշային ծանրորդները: 109 կգ քաշային կարգում յաղթող ճանաչուեց Սամուէլ Գասպարեանը՝ երկամարտի 356 կգ (156+200 կգ) արդիւնքով: Երկրորդ տեղում Սարգիս Կիրակոսեանն էր՝ 317 կգ, իսկ Դաւիթ Յալչեանը եզրափակեց լաւագոյն եռեակը՝ 260 կգ:

Հետաքրքիր պայքար ծաւալուեց գերծանրքաշայինների պայքարում: Այստեղ հաւասարը չունեցաւ Գոռ Մինասեանը, ով երկամարտում ցոյց տուեց 428 կգ (195+233 կգ) արդիւնք: Երկրորդ տեղում հանգրուանեց Ռուբէն Ալեքսանեանը՝ 426 կգ, իսկ աշխարհի ախոյեանը Սիմոն Մարտիրոսեանը միայն երրորդն էր՝ 421 կգ:

Մահացել է 20-րդ Դարի Լաւագոյն Դարպասապահներից Մէլը

Ֆուտպոլի Անգլիայի հաւաքականի նախկին դարպասապահ Գորդոն Բենկլը մահացել է 81 տարեկանում: 1996թ. աշխարհի ախոյեան մօտ 2015-ին յայտնաբերուել էր քաղցկեղ, փոխանցում է Daily Mail-ը:



Բենկլը IFFHS-ի վարկածով երկրորդ տեղն էր զբաղեցրել 20-րդ դարի լաւագոյն դարպասապահների ցուցակում՝ զիջելով միայն Լեւ Նաշինին: Պրոֆեսիոնալ մակարդակում նա հանդէս է եկել մօտ 20 տարի (1958-1977), «Լեւթերի» ու «Սթոք Սիթիի» հետ դարձել Անգլիական լիգայի գաւթակիր:

1970-ին Գորդոն Բենկլը ստացել է Բրիտանական կայսրութեան սպայի կոչում:

Զիդանը Զնարաւոր է Տեղափոխուի «Չելսի»

Անգլիական «Չելսի» ֆուտպոլային ակումբը քննարկում է ֆրանսացի մասնագէտ Զիդանին Զիդանին գլխավոր մարզիչ հրաւիրելու հնարաւորութիւնը: news.ru-ն, յղում անելով The Sun-ին, գրում է, որ կողմերի միջեւ բանակցութիւնները սկսուել են այս շաբաթ: Նշուում է, որ Զիդանը հետաքրքրուած է այդ առաջարկով: Զիդանի հետ միասին այդ պաշտօնին հաւակնում է թիմի ներկայիս մարզչի ժամանականաւոր պաշտօնակատար Մաուրիցիօ Սարին: Նա գլխավորում է թիմը անցած տարուայ ամրանից:



Անգլիայի Առաջնութեան Մրցաշարային Աղիւսակում «Չելսի» 6-րդ տեղում է:

«Բարսելոնայի» Նախագահ. Նեյմարի Կերադարձը Զնարաւոր Զէ

«Բարսելոնայի» նախագահ Խոսեպ Մարիա Բարտոմեուն բացառել է ֆրանսական ՊՍԺ-ի պրագիլացի յարձակուող Նեյմարի վերադարձը կատարնական ակումբը:

«Մի քանի անգամ գրուեցել եմ Նեյմարի հետ, սակայն նրա շրջապատից ոչ մէկը չի ասել ինձ, որ նա ցանկանում է վերադառնալ: Ինձ չեն գանգել այդ հարցով: Նեյմարի վերադարձը հնարաւոր չէ, քանի որ մենք ընտրել ենք այլ ճանապարհ: Մենք առաջ կը շարժուենք Դեմբելեի ու Կոուտինիոյի հետ: Դրանք ակումբի պատմութեան ամենամեծ ներդրումներն էին: Նրանք մեծ աջակցութիւն են ստանում մեր կողմից», - Radio Kanal Barcelona-ի եթերում ասել է Բարտոմեուն:

Յիշեցնենք, որ Նեյմարը «Բարսելոնայում» խաղացել է 2013-2017 թուականներին եւ ՊՍԺ է տեղափոխուել 222 միլիոն եւրոյի դիմաց: